

**Երևանի Կասկադի՝ բռնաճնշումների գոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր.
վերադառնալով մարզինալացված բլրագագաթից**

Ամփոփում. *Երևանի բարձունքներից մեկի վրա գտնվող տեսարժան վայրում կա խորհրդային շրջանի բռնաճնշումների գոհերին նվիրված մի արտասովոր հուշարձան, որի մասին Հայաստանում քչերը գիտեն: 2022 թվականի հունիսի 14-ին մի քանի ակտիվիստներ հավաքվել էին այս հուշահամալիրի մոտ, որպեսզի, մասնակցելով հուզիչ միջոցառմանը, իրենց հարգանքի տուրքը մատուցեն գոհերի հիշատակին: Մակայն այս չափազանց կարևոր իրադարձությանը շատ մարդ չէր արձագանքել: Ներկաների թիվը 30-ից քիչ էր, ինչը վկայում է այն մասին, թե որքան մարզինալ է շարունակում մնալ խորհրդային բռնաճնշումների պատմությունը հանրային տարածքում:*

*Հիշատակի հանդեպ դրսևորվող նման մոտեցումը կարող է վերաիմաստավորվել **Քաղաքական ոգեկոչման էթիկայի** շրջանակներում: Ունենալով հուշահամալիրը կարևորողների աջակցությունը՝ հայերը կարող են վերակենդանացնել այս առանձնահատուկ վայրը, եթե, կենտրոնանալով Կասկադի հուշահամալիրի և հունիսի 14-ի հիշատակի օրվա վրա, դարձնեն այս այցելությունները գոհերին ոգեկոչող ավելի լայն փորձի մաս: Հետազոտողները նույնպես կարող են նպաստել այդ գործին և փաստագրել իրենց տվյալները Վիքիպեդիայի տարածքում: Այս ջանքերը կարող են նաև ուշադրություն հրավիրել երկրի ավտորիտար ժառանգությանը պայմանավորված այլ խնդիրների վրա, գուցե և նպաստել քաղաքակիրթ հանրային խոսույթի ձևավորմանը, հաշվի առնելով, որ Հայաստանը շարժվում է դեպի ավելի կայուն ժողովրդավարություն աշխարհաքաղաքական անորոշության պայմաններում: Այս հոդվածը նաև ցույց է տալիս, որ Քաղաքական ոգեկոչման էթիկան, լինելով կենսունակ բարոյագիտական շրջանակ, կարող է հիմք դառնալ՝ հիշողությանն ու հիշատակին առնչվող հարցերի շուրջ մտորելու համար:*

Հայաստանում բոլորը գիտեն Կասկադ համալիրը՝ նշանավոր սանդուղքը, որ կապում է Երևանի կենտրոնը քաղաքի «վերնահարկում» գտնվող «Հաղթանակ» զբոսայգու հետ: Տարբեր մակարդակների հինգ հարթակներից բացվող տեսարանը անցնում է Երևանի փողոցներով և հասնում մինչև Արարատ լեռը: Համալիրի ներսում գտնվող արվեստի թանգարանն ունի միջոցառումների համար նախատեսված սրահներ, որոնք սպասարկվում են վերելակներով և շարժասանդուղքներով: Կասկադի լայն կրաքարե գոտին՝ ավելի քան 300 մետր երկարությամբ և 50 մետր լայնությամբ, ընդգծում է նաև քաղաքի հիմնական՝ հյուսիս-հարավ առանցքը, որն ընդգրկում է հետիոտնային Հյուսիսային պողոտան և Օպերայի տպավորիչ շենքը՝ Երևանի մշակութային կենտրոնը: Հայաստանի մայրաքաղաքի բոլոր հյուրերն անպայման այցելում են Կասկադի՝ սրճարաններով, ռեստորաններով և քանդակներով հարուստ տեսարժան պուրակը:

Մակայն Երևանում քչերը գիտեն, որ Կասկադի ամենավերին հարթակում գտնվում է նաև խորհրդային բռնաճնշումների գոհերի հիշատակին նվիրված մեծ հուշահամալիրը, որն, ինչպես և խորհրդային բռնաճնշումների պատմությունը, հիմնականում մնում է անտեսված՝ այն դեպքում, երբ Հայաստանի ավտորիտար անցյալը շարունակում է հետապնդել երկրի ներկայիս՝ հաճախ առճակատմամբ բնորոշվող քաղաքականությունը:

Հայերի մի փոքր խումբ այսօր փորձում է արթնացնել հիշողությունը բռնաճնշումների

մասին՝ համարելով, որ հարգանքի տուրք մատուցելով բռնադատվածների հիշատակին, հայերը կարևոր քայլ կանեն դեպի ժողովրդավարություն: Առանձին գոհերի անունները չեն ջնջվել նրանց հիշողությունից, սակայն, հաշվի առնելով Կասկադի հուշահամալիրի առկայությունը, նրանք հնարավորություն ունեն էապես ընդլայնելու ամեն տարի ոգեկոչման արարողությունը մասնակցող անձանց շրջանակը:

Այս հողվածում խորհրդային բռնաճնշումների գոհերի ոգեկոչման արարողությունը նկարագրվում է մասնակցի տեսանկյունից. արարողությունը դիտարկվում է Երևանի խարիզմատիկ ճարտարապետության համատեքստում. առկա գործելակերպը վերանայելու և մարզինալացումը հաղթահարելու համար որոշ փոփոխություններ առաջարկելու նպատակով կիրառվում է *Քաղաքական ոգեկոչման էթիկան*. ոգեկոչման արարողությունը որպես առանձին իրադարձություն քննարկվում է ընդլայնված ձևաչափում՝ անցյալի հետ իր կապի մեջ, ներառյալ գիտական կոնտեքստում: Ընդգծվում է, թե որքան կցկտուր բնույթ ունի խորհրդային բռնաճնշումներին և Կասկադի հուշահամալիրի ստեղծմանը վերաբերող գիտելիքը. առաջարկվում են եզրահանգումներ՝ որոշ պետական հաստատություններին և համալսարաններին ներկայացնելու համար, և վերջապես՝ ոգեկոչումը կապվում է Հայաստանի ներկայիս քաղաքական համատեքստի հետ:¹

Կասկադի հուշահամալիր, 14 հունիսի, 2022 թ

2022 թվականի հունիսի 14-ին մարդկանց մի խումբ հավաքվել էր Կասկադի հուշահամալիրում: Բարձրանալով Կասկադի աստիճաններով, ես մոտեցա ուղղանկյուն, արկղանման, ասես կուշ եկած շինությանը՝ չորս կողմից երկու թիզ բարձրության վրա անմատչելի ճակատի տակ գտնվող պատուհան-ձեղքերով: Եթե աչքերը կկոցել, կարող է թվալ, որ այդ շինությունը գլուխ է, ձեղքերը աչքեր են, իսկ մուտքը՝ քիթ: Միննույն ժամանակ Կասկադի հուշահամալիրը՝ իր կարծր բետոնե եզրերով և բացվածքով, որը ամրություններում կկոչվեր ամբարտակ, նաև բունկեր է հիշեցնում: Հուշահամալիրի հիմքը գոտևորված է հինգ աստիճաններով և բոլոր կողմերից ճիշտ մեջտեղում նեղ մուտք ունի:

Ներսում՝ դեպի կենտրոնը վեց մակարդակներով խորացող սրահում, մոտ 25 մարդ էր հավաքվել: Փոքրիկ բարձրախոսը լսելի էր դարձնում էլույթ ունեցողի՝ մուգ շապիկով մի մարդու խոսքը: Նա ռուսերենով բացատրում էր, թե ինչու ենք մենք հավաքվել: «Մարդիկ չէին ուզում խոսել այդ մասին, բայց մենք չպետք է լռենք, քանի որ դրանք հանցագործություններ էին»: Ոգեկոչման այս արարողությունը, որը կազմակերպել էր հետազոտող և ակտիվիստ Գայանե Շագոյանը Եվրասիա համագործակցություն

¹ Հողվածում հղված հեղինակների կողքին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հայաստանյան բազմաթիվ հետազոտողներին և գործընկերներին, այդ թվում՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կազմին և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) - Հայաստան կազմակերպությանը, որտեղ 2022 թվականի հոկտեմբերին ներկայացվել է այս աշխատության նախնական տարբերակը: Երկար տարիների ընթացքում Արփինե Փոքրտոլյանը և Տիգրան Մաթոսյանը կիսվել են արժեքավոր գաղափարներով, որոնք օգնել են ընդլայնել հետազոտության համատեքստը: «Վրաստանի պատմության շրջադարձային պահերը» սեմինարի ընթացքում Իլիայի պետական համալսարանի շրջանավարտները առաջարկել են մի շարք բարելավումներ: Բազմաթիվ գործընկերներ, որոնց թիվը չափազանց մեծ է անհատապես նշելու համար, օգնել են մշակել *Քաղաքական ոգեկոչման էթիկան* որպես ձևաձափ: Հատուկ շնորհակալություն երկու անանուն գրախոսներին իրենց ծավալուն մեկնաբանությունների և առաջարկությունների համար:

հիմնադրամի որոշակի աջակցությամբ, նվիրված էր բռնաճնշումների գոհերին:

Հայաստանում դա հիմնականում վերաբերում է 1936-1938 թվականների բռնաճնշումների, ինչպես նաև 1949 թվականի տեղահանությունների գոհերին:²

Հաջորդիվ ելույթ ունեցան տեղահանվածների ժառանգները՝ հիմնականում տարեց կանայք, որոնցից մի քանիսը, կարծես թե, խոսափողից օգտվելու փորձ չունեին: Շատ ընտանիքների մեկ կամ ավելի սերունդներ են անցկացրել Սիբիրում: Դժբախտաբար, տեղահանվել էր նաև 1945-ից հետո Հունաստանը կամ Մերձավոր Արևելքը հայրենադարձվելու նպատակով լքած հայերի մի մասը: Հայրենիք հասնելուց կարճ ժամանակ անց այս հույսով լի մարդիկ արտաքսվել էին ցրտաշունչ արքայապարտեր:³

Հուշարձանի կենտրոնական մասում՝ ճիշտ մեջտեղում, գտնվում է մեծ հուշաքար, որի վրա փորագրված են 20-րդ դարի ամենանշանավոր հայ բանաստեղծներից մեկի՝ Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի հետևյալ բառերը.

Բոլոր նրանց հոգիներին արևավառ

Կենտրոնական հուշաքարի կողքին երկու մեծ ծաղկեպսակ էր դրված հետևյալ մակագրերով. «Ի հիշատակ պետական բռնաճնշումների գոհերի»՝ Հայ ազգային կոնգրեսից, և «Ի հիշատակ կոմունիզմի գոհերի»՝ Պահպանողական կուսակցությունից:⁴

Կենտրոնական հուշաքարը լուսավորվում է վերևում գտնվող փոքր գմբեթից թափանցող լույսով: Գմբեթը զարդարված է առանձնահատուկ հայկական խաչքարային ոճի քարաքանդակներով, որոնք կարելի է տեսնել նաև Կասկադի հուշահամալիրից դուրս: Եթե, կանգնելով հուշաքարի կողքին, նայես վեր, թվում է, թե եկեղեցու գմբեթ ես տեսնում:

² Տե՛ս այս ժամանակաշրջանին վերաբերող առաջնային հղումը՝ Ronald Grigor Suny, “Soviet Armenia,” հետևյալ գրքում. The Armenian People from Ancient to Modern Times. Vol 2: Foreign Dominion to Statehood: The 15th to 20th Century Ed. by Hovannisian, Richard G. (Basingstoke: Macmillan, 1997):

Տեղահանություններին են վերաբերում վերջին շրջանի հետևյալ, թեև ոչ այդքան լայն ճանաչում ունեցող գիտական հետազոտությունները. Jo Laycock, “Survivor or Soviet Stories? Repatriate Narratives in Armenian Histories, Memories and Identities,” *History and Memory* 28 (January 1, 2016): 123, <https://doi.org/10.2979/histmemo.28.2.0123>, ինչպես նաև Joanne Laycock, “The Repatriation of Armenians to Soviet Armenia, 1945–49,” հետևյալ գրքում. *Warlands: Population Resettlement and State Reconstruction in the Soviet-East European Borderlands, 1945–50*, ed. Peter Gatrell and Nick Baron (London: Palgrave Macmillan UK, 2009), 140–61, https://doi.org/10.1057/9780230246935_7.

Հուզիչ լեզվով շարադրված և համոզիչ լուսանկարներով հագեցած էսսեի հետ ծանոթանալու համար տես՝ Գայանե Մկրտչյան և Նելլի Շիշմանյան. «Հայաստանի թաքնված հիշողությունը. ստալինյան բռնաճնշումներ»: Չայխանա: Մայիսի 4, 2018, <https://chaikhana.media/en/stories/668/armenias-hidden-memory-stalins-great-terror>.

Տեղահանությունների վերաբերյալ մեկ այլ ուշագրավ ամփոփում է ներկայացնում Միքայել Յալանուզյանի՝ աղբյուրների հիման վրա գրված «Աքսոր Սիբիր» զեկույցը (EVN Report (blog), Օգոստոսի 31, 2021, <https://evnreport.com/magazine-issues/exile-to-siberia/>).

³ Տես նաև՝ Jo Laycock, “Belongings: People and Possessions in the Armenian Repatriations, 1945–49,” *Kritika: Explorations in Russian and Eurasian History* 18, no. 3 (2017): 511–37, <https://doi.org/10.1353/kri.2017.0034>. Հայրենադարձության մասին բազմաթիվ վկայություններ կարելի է գտնել հետևյալ կայքում. <https://hayrenadardz.org/>.

⁴ Դուրս գալով այս հոդվածի շրջանակներից, թերևս, նպատակահարմար եմ համարում նշել, որ այս տարբեր ձևակերպումները ցույց են տալիս, թե ի՞նչն է շեշտադրվում անցյալն ընկալելիս:

Իսկ եթե ներսից նեղ որմանցքի միջով նայես դուրս, կարող է թվալ, թե կինոժապավենի մի դրվագ ես տեսնում՝ մոտակայքի շենքերը, ծառերը, երևանյան սարալանջը և (այս պարզ օրը) Արարատ լեռան մի փոքրիկ կտորը: Մակայն անգամ այս պարսպապատված բունկեր-համալիրի ներսում լսվում է արտաքին աշխարհի արձագանքը՝ մոտակա փողոցի երթևեկության միապաղաղ բզզոցը, որը մերթ ընդ մերթ ընդհատվում է մեքենաների ազդանշաններով: Թերևս ճանապարհին մոտ լինելով էր պայմամավորված ներսում կուտակված փոշին, որը խմբի միակ տղան օգտագործում էր ոտքերով տարբեր պատկերներ գծելու համար: Ես փորձեցի լուսանկարել իմ ոտնահետքերը, սակայն բետոնի վրա նույնիսկ փոշու մեջ թողած հետքերը անորոշ էին:

Ամփոփեմ՝ մեծ կառույց, անմատչելի, անմերձենալի, բայց և ձգող, ցավոտ հիշողություն բովանդակող և պահպանող. բրուտալ ճարտարապետություն, որն ամենայն ճշգրտությամբ արտացոլում է խզումը՝ դժվար էր պատկերացնել ավելի համապատասխան հուշահամալիրը: Ուշագրավ է նաև, որ այն տեղադրվել է աչքի ընկնող տեղում՝ Կասկադ համալիրի ամենավերևում, մեծ կոթողի կողքին, որը տեսանելի է Երևանի բոլոր վայրերից և խորհրդանշում է Հայկական Սոցիալիստական Հանրապետության 50-ամյակը:⁵

Քաղաքական ոգեկոչման էթիկայի փորձարկում

Հայաստանում 2006 թվականին ընդունված օրենքի համաձայն հունիսի 14-ը սահմանվել է «Բռնադատվածների հիշատակի օր»:⁶ Այդ օրը 1949 թվականին Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից մարդկանց սկսեցին արտաքսել Սիբիր:⁷ Չարմանալի զուգադիպությամբ Բալթյան երկրներում 1941 թվականի հունիսի 14-ը նույնպես կապված է գանգվածային տեղահանությունների հետ և դարձյալ Սիբիր:⁸

Ես մեկնել էի Երևան հատուկ այս օրվա համար: Եթե հայացք գցենք հիշատակին վերաբերող նախկինում տեղ գտած բանավեճերին, դժվար է չտեսնել, որ, ունենալով քաղաքական պատկերացումները ներկայացնող լուրջ տեսություններ, որոնք հաշվի են առնում ներկան և ապագա նպատակները, մենք կարծես թե չունենք համոզիչ մոտեցումներ, թե ինչպես գնահատել այդ պատկերացումները, երբ դրանք կապված են անցյալի հետ: Տարբեր գործընկերների հետ զրույցների ընթացքում մշակվեց *Քաղաքական ոգեկոչման էթիկան*, որի նպատակն է օգնել հասկանալ, թե ինչը և ինչպես ենք մենք հիշում: Այս մոտեցումը թույլ է տալիս կիրառել *Արդար պատերազմի* տեսության գաղափարները հիշատակի հետ կապված հարցերը քննարկելիս: Այս ձևաչափը պետք է օգնի առանձին քաղաքացիներին իրենց ներկայացված զգալ անցյալի վերաբերյալ

⁵ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <https://architectuul.com/architecture/yerevan-cascade>. Եթե այլ նշումներ չկան, բոլոր աղբյուրները վերջին անգամ օգտագործվել են 2022 թվականի նոյեմբերի կեսերին:

⁶ Թարգմանված է հայերենից: Տես՝ Ազատություն ռադիոկայան. «Հայաստանում առաջին անգամ նշվեց Բռնադատվածների հիշատակի օրը»: Հունիսի 14, 2006: <https://www.azatutyun.am/a/1582499.html>

⁷ Արտաքսման հրամանագիրը հասանելի է <https://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022942> կայքում:

⁸ Հարուստ գիտական գրականության հետ մեկտեղ Բալթյան երկրներում տեղի ունեցած տեղահանությունների մասին լավ պատկերացում է տալիս նաև հետևյալ համառոտ ֆոտոշարքը. “Estonia Remembers the Soviet Deportations,” *Estonian World* (բլոգ), Հունիս 13, 2022, <https://estonianworld.com/life/estonia-remembers-the-soviet-deportations/>.

հանրային կարծիքի ձևավորման հարցում՝ միևնույն ժամանակ թույլ տալով ներկայացված լինել նաև մյուսներին:⁹

Նման շրջանակ առաջարկելը հավակնոտ նախաձեռնություն է և պետք է փորձարկվի աշխարհում, գուցե և՛ աշխարհի դեմ: Ահա թե ինչու էս, արդեն ունենալով այլ համատեքստեր ուսումնասիրելու և դրանց մասին գրելու փորձ, որոշեցի գալ նաև Հայաստան:

Քաղաքական ոգեկոչման էթիկայի հիմնական պնդումն այն է, որ մեզ անհրաժեշտ է բազմաչափ շրջանակ, որը համահունչ է *Արդար պատերազմի* ավանդույթին և օգտագործում է մի շարք՝ *Ius ad Bellum*-ին և *Ius in Bello*-ին համապատասխանող չափանիշներ:¹⁰

Ius ad Memoriam-ը հիմնականում հաշվի է առնում, թե ինչպես ենք մենք արժևորում և արդարացնում պատճառի, մտադրության, լեզվատիրության և հաջողության ողջամիտ հնարավորության վրա հիմնված ոգեկոչումը: *Ius in Memoria*-ն առաջարկում է հիմնական չափանիշների վրա հիմնված ուղեցույց այն մասին, թե ինչպես դրսևորել զսպվածություն ոգեկոչման ժամանակ՝ հաղթահարելով խմբային մոտեցումները, դուրս գալով անվերջ շրջանառվող նարատիվներից, ձեռք բերելով բարոյական ինքնավարություն և հաշվի առնելով հնարավոր անհիմնալիս:¹¹

Եթե հաշվի առնենք *Ius ad Memoriam*-ի առաջին չափանիշը, ապա պետք է ասել, որ Կասկադի հուշահամալիրում տեղի ունեցած իրադարձությունը հիմնավոր պատճառ ուներ. 1930-ականների գտումների արդյունքում Հայաստանում մի քանի հազար մարդ մահապատժի ենթարկվեց, իսկ տասնյակ հազարավորներ տեղահանվեցին տասնամյակներ տևած բռնաճնշումների ընթացքում: Միանալով ոգեկոչմանը՝ ես ցանկանում էի անձամբ տեսնել, թե արդյոք գործում են նաև մյուս չափանիշները:

Շրջանակի փորձարկումն ավելի լայն իմաստ ունի: Կովկասյան տարածաշրջանում ոգեկոչման խնդիրը արդիական է, և դա շեշտվում է 2018 թվականին Caucasus Edition ամսագրում Այքան Սևերի, Քրիստինա Սոլոյանի, Նամիկ Աբդուլանի և Սևիլ Հուսեյնովայի հեղինակությամբ լույս տեսած հոդվածում:¹² Հիշողության կառավարմանը վերաբերող էսսեների վերջին ժողովածուի ներածությունում նույնպես նշվում է, որ «տարածաշրջանի մի շարք երկրներում՝ Բալթիկ ծովից մինչև Միջերկրական, անցյալը վերահսկելու և

⁹ Այս մոտեցումը համառոտ ձևով ներկայացված է հետևյալ աշխատության մեջ. Hans Gutbrod և David Wood, “Ethics of Political Commemoration – An Overview on the Concept,” Center for Peace and Conflict Studies, Seton Hall University, Մայիս, 2021, <https://www.shu-cpcs.org/ethics-of-political-commemoration>.

¹⁰ *Արդար պատերազմի* տեսության և *Քաղաքական ոգեկոչման էթիկայի* միջև եղած կապի մասին մանրամասնորեն տես՝ Hans Gutbrod, “Just War Theory: The Only Winner Across Four Grim Conflicts,” *Opinio Juris*, 27 հունիսի, 2022, <https://opiniojuris.org/2022/06/27/just-war-theory-the-only-winner-across-four-grim-conflicts/>.

¹¹ Այս չափանիշների վերաբերյալ մանրամասն քննարկումը կարելի է գտնել առաջիկայում լույս տեսնող աշխատության մեջ. Hans Gutbrod և David Wood, *Ethics of Political Commemoration: Towards a New Paradigm*, Palgrave, 2023:

¹² Այքան Սևեր և այլք. “What and How Do We Remember? The Politics of Official Commemoration in Armenia, Azerbaijan, and Turkey,” Caucasus Edition, *Journal of Conflict Transformation*, Հունիս 15, 2018, <https://caucasusedition.net/the-politics-of-official-commemoration-in-armenia-azerbaijan-and-turkey/>.

քաղաքականացնելու անհանգստացնող միտումներ են նկատվում»:¹³ Այն պարագայում, երբ որոշ ռուս զինվորներ, ներխուժելով ինքնիշխան երկիր, խորհրդային դրոշներ են ծածանում, բռնի անցյալի ժառանգությանն անդրադառնալու խնդիրը հրատապ բնույթ է ձեռք բերում:¹⁴

Բռնադատվածների անվանական

Կասկադի հուշահամալիր մտնելիս ես տեսա քաղաքացիական իրավունքների պաշտպան և իմ նախկին գործընկեր Իգարելլա Սարգսյանին, որը տեղեկացրել էր ինձ միջոցառման մասին:¹⁵ Երբ ես միացա փոքր խմբին, նա շրջվեց դեպի ինձ, հարցրեց, կարդում եմ արդյոք ռուսերեն, և երբ ես գլխով արեցի, ինձ երկու անուններով թերթիկ մեկնեց: Առաջին ենթադրությունս այն էր, որ ռուսերենով հանդես եկող խոսնակը պատմելու է այս երկուսի՝ որպես զոհերի ավելի մեծ խմբի ներկայացուցիչների, ճակատագրի մասին:

Ցանկանալով գրանցել այն, ինչ կարող էի, ես նշումներ էի անում թերթի դատարկ էջի վրա, և երբ, լրացնելով էջը, շրջեցի այն, վերևի ձախ անկյունում նկատեցի ձեռքով գրված «15» թիվը: Ինչու՞ որևէ մեկը պետք է թվեր գրեր բաժանվելիք թղթերի վրա: Ակնհայտ էր, որ խնդիրը հետևյալն է. կկարողանա՞մ արդյոք բարձրաձայն կարդալ նշված անունները: Ինձ հետ առաջ շարժվողները հայերեն էին խոսում, և այդ պատճառով ես չէի հասկանում, որ նրանք նույնպես անուններ են կարդում: Հավանաբար, Կասկադի 572 աստիճաններով բարձրանալուց հետո ես նաև մի քիչ շշմած էի:

Շուտով հերթը հասավ ինձ: Ես աստիճաններով իջա կենտրոնական հրապարակ,

¹³ Ուլա Մանս և Յոսիա Էքման՝ էսսեների ծավալուն հավաքածուի ներածությունում: Տես՝ Նիննա Սյորներ, իսր. *Constructions and Instrumentalization of the Past: A Comparative Study on Memory Management in the Region* (Center for Baltic and East European Studies (CBEES), Södertörn University, 2020). էջ.7:

¹⁴ Ռուսաստանում զորահավաքների պատմությանը վերաբերող լայնածավալ գրականության կողքին վերջին հրատարակումների շարքում տես՝ Hubertus Jahn, “A War on History? Patriotism and Propaganda in Contemporary Russia,” History Workshop, Ապրիլ 29, 2022, <https://www.historyworkshop.org.uk/a-war-on-history-patriotism-and-propaganda-in-contemporary-russia/>.

Մինչև 2022 թ. տեղի ունեցած հատուկ զորահավաքների մասին տես՝ Jade McGlynn, “Historical Framing of the Ukraine Crisis through the Great Patriotic War: Performativity, Cultural Consciousness and Shared Remembering,” *Memory Studies* 13, no. 6 (Դեկտեմբերի 1, 2020): 1058–80, <https://doi.org/10.1177/1750698018800740>.

Խորհրդային դրոշների ներկայության մասին տես՝ Ishaan Tharoor, “Soviet Flags Keep Rising over Russian-Occupied Ukraine,” *The Washington Post*, May 2, 2022, <https://www.washingtonpost.com/world/2022/05/02/soviet-putin-russia-revenge-of-history/>.

¹⁵ Ինչ վերաբերում է դիրքորոշմանը, ապա այս հոդվածը գրված է տարածաշրջանին ծանոթ լինելու, այլ ոչ թե ներսից իմանալու տեսանկյունից: 1999 թվականից ես պարբերաբար այցելել եմ Հայաստան, իսկ 2006-2012 թվականներին եղել եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տարածաշրջանային տնօրեն՝ գրասենյակներով Բաքվում, Թբիլիսիում և Երևանում, ղեկավարել եմ տնտեսական, քաղաքական և սոցիալական հարցերին նվիրված տասնյակ հետազոտական նախագծեր, որոնցում շեշտը դրվել է թիրախային խմբերի և հարցումների վրա: 2004 թվականից սկսած ես գնահատումներ և այլ խորհրդատվական աշխատանք եմ իրականացրել Հայաստանում, ներառյալ գյուղական վայրերում, ունեմ բազմաթիվ՝ Կովկասին և Հայաստանին վերաբերող հրապարակումներ: Ռուսերենի իմացությունս խոսակցական մակարդակի վրա է, սակայն հայերենին չեմ տիրապետում: Վերջին քսանից ավելի տարիներին հիմնականում բնակվել եմ Թբիլիսիում:

վերցրեցի խոսափողը և սկսեցի կարդալ.

Կոնստանտին Բիրամու

31 տարեկան

Դվին-Այսոբ ազարակի գյուղացի

Կամարլինսկի շրջան

Գնդակահարվել է 1938 թ մարտի 10-ին

Սոգոմոն Բոյախջյան

66 տարեկան

Կոլխոզնիկ, գյուղ Բասարգեչար

Բասարգեչարի շրջան

Գնդակահարվել է 1937 թ դեկտեմբերի 2-ին

Ինչպես և սպասվում էր, ես սայթաքեցի անուններն արտասանելիս: Ինչպե՞ս արտասանել ռուսերենով գրված Սոգոմոն անունը: Ռուսերենում միայն շեշտված «o»-ն է արտասանվում որպես այդպիսին, իսկ մյուսները արտասանվում են որպես «ա»՝ ինչպես, ասենք, «Հայաստան» բառում: Սակայն սա հայկական անուն էր՝ տառադարձված կիրիլիցայի: Երբ ես դարձյալ կանգ առա՝ այս անգամ Բասարգեչարի վրա, օգնության հասավ ներկաներից մեկը՝ հուշելով ճիշտ արտասանությունը:

Ակնհայտ է, որ երկմտանքի այս պահերն ընդգծեցին կոնկրետ անունների անհատականությունը. այդ անունները կրողները ոչ թե պարզապես մեծ խմբի մի մասնիկն էին, այլ առանձին անհատներ: Այդ պահերին կատարվողը շատ ավելի մասնակցային բնույթ ուներ, քան ես կարող էի ենթադրել:

Ավելի ուշ Շագոյանն ասաց, որ նախկինում նման միջոցառումների ժամանակ զոհերի անունները չէին բարձրաձայնվում: Այս անգամ, մասամբ որպես հարգանքի նշան ռուսական «Մեմորիալ» կազմակերպության նկատմամբ, երևանյան միջոցառման նախաձեռնողները որդեգրել էին «Մեմորիալի» ոգեկոչման ոճը՝ «Անունների վերադարձը», հաշվի առնելով, որ Մոսկվայում նման նախաձեռնության ցանկացած փորձ այլևս անհնար էր դարձել:¹⁶

¹⁶ Սոլովեցկի քարի մոտ տեղի ունեցած՝ անունների վերադարձի արարողության մասին տես՝ Лейла Гиниатулина. Так возвращаются имена. *Радио Свобода*, Հոկտեմբերի 29, 2010, բաժին՝ Главные разделы, <https://www.svoboda.org/a/2204499.html>, ինչպես նաև Margaret Comer, “Uncovering Violent Narratives: The Heritage of Stalinist Repression in Russia since 1991,” in *Heritage of Death* (Routledge, 2017).

«Մեմորիալ»-ի փակման մասին տես՝ Rachel Denber, “In Closing Memorial, Russia Heralds a New, Grimmer Era of Repression,” *The Moscow Times*, December 30, 2021, <https://www.hrw.org/news/2021/12/30/closing-memorial-russia-heralds-new-grimmer-era-repression>.

Անանուն օգտատերը նշել է, որ 2022 թվականին անունների ընթերցումն իրականացվել է վիրտուալ եղանակով և որ աշխարհի տարբեր ծայրիկ մարդիկ իրենց մասնակցությունն են բերել: Այս նյութը կարելի է տեսնել Instagram-ում՝ @topos.memo.ru հասցեով:

Որպես ծիսակարգ այս մոտեցումը կարծես թե առաջարկում է այն, ինչին շատերը կցանկանային հասնել ոգեկոչման արարողության շնորհիվ. վերահաստատել մարդկանց անհատականությունը՝ ի հեճուկս տոտալիտար բռնաճնշումների:¹⁷

Մարզինալացված հուշարձանը

Լիտվայի դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն ժամանեց իր հարգանքի տուրքը մատուցելու: Մարգայանը և Շագոյանը, որը նաև աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, ողջունեցին նրան և բացատրություններ տվեցին կառույցի և ընդհանուր համատեքստի վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ, հուշահամալիրը նախագծվել էր Երևանի գլխավոր ճարտարապետ Ջիմ Թորոսյանի անձնական նախաձեռնությամբ: Իշխանությունների թույլտվությամբ ԽՍՀՄ փլուզումից հետո նա ընդգրկել էր այս շենքը իր կողմից ավելի վաղ հեղինակված և ավելի մեծ «Կասկադ» նախագծի մեջ: Հուշահամալիրի կառուցումը համահունչ էր ապաստանինացման, այսպես կոչված քաղաքական «հալոցք»-ի ժամանակաշրջանի օրակարգին:¹⁸ Հուշարձանի պաշտոնական բացումը տեղի էր ունեցել 2008թ:¹⁹

Սակայն այժմ այն ասես որբացած լինի: Մինչ այժմ, բացառությամբ բացման օրվա, կառավարության որևէ բարձրաստիճան ներկայացուցիչ չի այցելել համալիրը, թեև նրանց բազմիցս հրավիրել են: Մարգայանն ասաց, որ իրենց բոլոր զանքերը և փորձերը պարզելու, թե ո՞ր պետական կառույցն է պատասխանատու շենքի համար, վերածվում էին իսկական պայքարի: Թե՛ մշակույթի հարցերով զբաղվող պետական հանձնաժողովի, թե՛ կրթության նախարարության, թե՛ քաղաքապետարանի կամ այլ կառույցների ներկայացուցիչներն այդպես էլ չկարողացան պարզաբանել, թե իրականում ու՛մ է պատկանում շենքը: Գործընկերներից մեկը մեկ շաբաթ էր ծախսել հարցումներ անելով: «Ոչ ոք առանձնապես չի ցանկանում իր բյուջեում ընդգրկել այդ շենքը և իր վրա վերցնել շենքի պահպանման հետ կապված պարտականությունները»:

Հիմնականում կողպված հուշարձանի ներսում աստիճանաբար փոշի և կեղտ է կուտակվում: Արդարադատության նախարարությունն իր ամենամյա շաբաթօրյակի շրջանակներում տարեսկզբին ստանձնել էր հուշարձանի մաքրման գործը, սակայն մինչև օրս կանոնավոր խնամքը կազմակերպելու հարցով զբաղվում են ակտիվիստները: Պարզվում է, որ փոշին հուշարձանի ճարտարապետության մաս չի կազմել: Համենայն դեպս, քաղաքի մյուս ծայրում գտնվող «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի աշակերտները ժամանակ առ ժամանակ հոգում են հուշարձանի խնամքը: Նրանց ուսուցիչը ներգրավում է իր կողմից դասավանդվող դասարանների աշակերտներին: «Հաճախ հենց այսպես է լինում», - սա էր մեկնաբանություններից մեկը: «Փոփոխությունը սկսվում է այն պահից, երբ ինչ-որ մեկը հանդես է գալիս նախաձեռնողի դերում»:

Դարպասի բանալին ստանալը մեծ խնդիր էր: Կասկադի հուշահամալիրը պետք է կողպված լինի, որպեսզի մարդիկ չմտնեն և չօգտագործեն սգո այս վայրն ապաստանելու

¹⁷ «Անունների վերադարձը» նկարագրվում է նաև այստեղ՝ <http://october29.ru/about/>. այս հղման համար ես դարձյալ պարտական եմ անանուն մեկնաբանին.

¹⁸ Խորհրդային «հալոցք»-ի տարիներին Հայաստանի դերի մասին տես՝ Pietro Shakarian, “Yerevan 1954: Anastas Mikoyan and Nationality Reform in the Thaw, 1954–1964,” *Peripheral Histories*, 2021, <https://www.peripheralhistories.co.uk/post/yerevan-1954-anastas-mikoyan-and-nationality-reform-in-the-thaw-1954-1964>.

¹⁹ Այս մասին տես՝ <https://www.azatutyun.am/a/1598689.html>.

կամ խնջույքների համար: Ինչպե՞ս են այստեղ հայտնվել ծխախոտի մնացորդները: «Դրսի աստիճաններին նստած մարդիկ ծխում ու ներս են նետում դրանք»:

Եթե հիշենք *Քաղաքական ոգեկոչման էթիկայի* շրջանակի չափանիշներից մեկը, ապա կարելի է արձանագրել, որ այս հուշարձանը ունի լեգիտիմություն, սակայն ունի նաև հեղինակության պակաս:²⁰ Ոգեկոչման այս վայրի մասին երևանցիներից շատերը երբեք չեն լսել: Շատ քչերն են այցելել այն: Որոշ մարդիկ օգտագործում են այն որպես մոխրաման:

Ես տեսա, թե ինչպես Լիտվայի դեսպանը վայր դրեց իր բերած ծաղիկները: Որևէ այլ դիվանագետ այդպես էլ չեկավ:

Համապատասխանություն օրենքի գերակայությանը

Երբ մենք վերադառնում էինք, ես շրջվեցի: Այն, ինչ ներսից նման էր եկեղեցու գմբեթի, դրսից փոքրիկ աշտարակ էր հիշեցնում: Ավելի ուշ՝ նույն այդ արևոտ հունիսի 14-ին, ոգեկոչման միջոցառման աջակից կազմակերպություններից մեկը՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, գրքի շնորհանդես էր կազմակերպել՝ կապված քաղաքական հետապնդումների գոհերի, այդ թվում՝ Հայաստանի ոչ վաղ անցյալի գոհերի հետ:²¹ Միջոցառումը Շվեդիայի կառավարության աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների ծրագրի մի մասն էր: Ծրագրի հիմնավորումն այն է, որ դժվար է կառուցել կանոնները հարգող հասարակություն, եթե հիմքում ընկած չեն իշխանությունների սխալները շտկելու կամ առնվազն ընդունելու ջանքերը: Ինչպես շեշտեցին մի քանի բանախոսներ, «քրեական մտածելակերպը», որը հաճախ համարվում է արդյունավետ բարեփոխումների հիմնական խոչընդոտ, նույնպես ծագել է խորհրդային շրջանում արմատավորված արատավոր քրեակատարողական համակարգից: Բանախոսներից մեկը հանդես եկավ ի պաշտպանություն Հայաստանի անկախացումից հետո ձերբակալված քաղաքատարկյալների, և որպես վերջին շրջանի բազմաթիվ օրինականությունների ապացույց, որոնք նրա կարծիքով շարունակում են բռնաճնշումների ավանդույթը, վկայակոչեց Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները:²²

Երկրորդ նիստի թեման էր «Չորս պատմություն իշխանության մասին» ժողովածուն:²³ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի տնօրեն Գևորգ Տեր-Գաբրիելյանը, ի թիվս այլ հարցերի, ընդգծեց, թե ինչպես էին Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի կառավարությունները, ճոխացնելով և գովաբանելով Հին Հռոմի ժամանակաշրջանի պատմական խոսույթը Տիգրան Մեծի վերաբերյալ, շեղում ուշադրությունը Խորհրդային Միության խմբիներին անդրադառնալուց:²⁴

²⁰ «Օրինական իշխանությանը» վերաբերող ավելի մանրամասն քննարկման հետ ծանոթանալու համար տե՛ս Քաղաքական ոգեկոչման էթիկային նվիրված գիրքը, որը կհրատարակվի 2023 թ. Դեվիդ Վուդի համահեղինակությամբ:

²¹ Մանրամասնությունների համար տես՝ <https://www.epfarmenia.am/>

²² Տես, օրինակ՝ https://www.echr.coe.int/documents/cp_armenia_eng.pdf .

²³ Նաիրա Մկրտչյան, Գևորգ Տեր-Գաբրիելյան, Վարսեր Կարապետյան, Արմեն Գրիգորյան. «Չորս պատմություն իշխանության մասին»: Եվրասիա Համագործակցություն հիմնադրամ, 2022, <https://epfarmenia.am/hy/document/Four-Stories-About-Power-2022>.

²⁴ Տիգրան Մեծի կերպարի այս նոր շեշտադրման մասին տես՝ Razmik Panossian, *The Armenians: From Kings and Priests to Merchants and Commissars* (New York : Columbia University Press, 2006),

Կառավարման անցած փուլի համադրումը քաղաքական և հասարակական ներկայի հետ այդ հիշատակի օրվա արժանի ավարտը դարձավ:

Շատ դիտորդների կարծիքով Հայաստանի «բազմաշերտ անցյալի» մի մասին պատշաճ անդրադարձ չի կատարվել:

Շեշտելով ժառանգականության բարձր աստիճանը՝ հայ առաջատար պատմաբան և 1990-ականներին Հայաստանի նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը նշել է, որ «խրհրդային իշխանության ազդեցությունը հասարակության տնտեսության, քաղաքական մշակույթի, բարոյականության և մտավոր առողջության վրա չստացավ իր գնահատականը: «Մտավորական» դասը չկարողացավ քննել ո՛չ այն արժեքները, որոնցով առաջնորդվել են մտավորականները, գրողները և արվեստագետները, ո՛չ էլ այդ արժեքների ազդեցությունը հասարակության հոգևոր և մշակութային բարեկեցության վրա»:²⁵ Ըստ Լիպարիտյանի՝ խորհրդային համակարգը «մինչև հիմքը փտած էր», ընդ որում բոլոր ոլորտներում:²⁶

Իր աշխատություններից մեկում (2018) ռումինացի պատմաբան Օանա-Վալենտինա Մուչիուն պնդում է, որ «Ցեղասպանության ժառանգության» և Լեոնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված խնդիրների կողքին «հայերի համար ամենամեծ առաջիկա մարտահրավերն է կարողանալ հաշտվել և կարողանալ, անդրադառնալով անցյալի մրցակցող էջերին, ներգրավել տալիսյան բռնաճնշումների և տեղահանությունների հետ կապված հիշողությունները», և որ անցումային արդարադատության անգամ ոչ պաշտոնական օրակարգը կարող է, «լույս սփռելով այդ շերտավոր տրավմաների վրա, արդյունավետ միջոց դառնալ թե՛ հասարակությանը, թե՛ քաղաքական մարմիններին կրթելու և պետականաշինությանն ուղղված ավելի լայն նպատակներին հասնելու համար», ներառյալ «ինչպես հակամարտությունների կարգավորման գործընթացները, այնպես էլ ավելի լայն՝ ժողովրդավարացման գործընթացը»:²⁷

Մեկ այլ թերևս ավելի լայնորեն կիրառելի համատեքստում, Ռոնալդ Սյունին, գրելով թուրք պատմաբանների հետ իր համագործակցության մասին, նույնպես կոչ է անում դուրս գալ անվերջ շրջանառվող նարատիվներից, նշելով, որ «պարզամիտ ազգային միջերը, որոնք ինքնին պատմաբանների և քաղաքական գործիչների մոգոնաձն են, պետք է շարունակաբար հարցականի տակ դրվեն, որպեսզի որոշակի ուժային և գիտելիքի կառույցները պաշտպանելու համար որպես գործիք ստեղծված «իրականությունները» փոխարինվեն դրանք քանդող նարատիվներով, որոնք դուրս կբերեն մեզ ազգայնականությունից և կտանեն դեպի ավելի շիտակ ըմբռնում»:²⁸

<http://archive.org/details/armeniansfromkin00razm>., էջ. 42:

²⁵ Gerard Libaridian, *Modern Armenia: People, Nation, State* (Routledge, 2007), էջ 211:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Oana-Valentina Suci, “Confronting Multiple Pasts in Post-Soviet Armenia,” in *Transitional Justice and the Former Soviet Union: Reviewing the Past, Looking toward the Future*, ed. Cynthia M. Horne and Lavinia Stan (Cambridge: Cambridge University Press, 2018), 282–302, <https://doi.org/10.1017/9781108182171.014>., էջ 297:

²⁸ Ronald Grigor Suny, *“They Can Live in the Desert but Nowhere Else”: A History of the Armenian Genocide* (Princeton University Press, 2015), էջ 11: (Սյունին նկատի ունի, որ այդ միջոցներով (ազգայնականության քարոզով) այդ կառույցները չեն ամրապնդվում իրականում, մինչդեռ շիտակ ըմբռնումը կօգնի դրանք իրոք ամրապնդել – *ծանոթություն թարգմանության խմբագրի*)

Խոսելով ավելի կոնկրետ՝ խորհրդային շրջանի բռնաճնշումների մասին՝ Ջո Լեյքոքը նշում է, որ «հայրենադարձների նարատիվները նույնպես մարտահրավեր են նետում հայոց պատմության մեջ գերիշխող պատումներին և ցույց են տալիս, թե որքան բարդ և բազմազան փորձ են ձեռք բերել հայերը Ցեղասպանությունից հետո»:²⁹

Այսպիսով, բազմաթիվ ձայներ պնդում են, որ հայոց պատմության խորհրդային շրջանի էջերն ավելի մեծ ուշադրության են արժանի: Մակայն, ինչպես նշում է Սուչիուն, «առայժմ Հայաստանը շարունակում է մնալ իր պատմության և աշխարհագրության գերին»:³⁰ Արդյունքում տեղի է ունենում այն, ինչը միջոցառման սկզբում շեշտեց Իզաբելլա Սարգսյանը. «Ցավալի է արձանագրել, որ շատերը տեղյակ չեն մեր անցյալի այս էջերից, շատերը չեն գալիս այս օրը նշելու, իսկ կառավարությունը որևէ ուշադրություն չի դարձնում այս խնդրին»:

Քաղաքական հիշողության վերականգնում

Կասկադի բլրագագաթին մոռացության մատնված հուշահամալիրը կարող է դառնալ այն խարիսխը, որը թույլ կտա վերհիշել և պատշաճ ուշադրության առարկա դարձնել խորհրդային բռնաճնշումների շրջանը: Համալիրն ինքնին այնքան սերտորեն է կապված Երևանի ստեղծման պատմության հետ, որ ոգեկոչումն արդեն իսկ ունի իր համար նախատեսված հատուկ վայրը՝ lieu de mémoire-ը:³¹ Համալիրի գաղափարն ի սկզբանե մտահղացել է ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, որն ավելի մեծ դեր է խաղացել Երևանի համար, քան Ժորժ-Էժեն Օսմանը՝ Փարիզի:³²

Երբ 1920-ականներին ստեղծվեց Հայաստան պետությունը, Թամանյանը նախագծեց այն քաղաքը, որտեղ պիտի ապրեր իր ժողովուրդը: Թամանյանի արձանը խոյանում է Կասկադի սկիզբը նշանավորող փոքրիկ պուրակում: Հսկա աստիճանաշարի կառուցման գաղափարը, սակայն, չիրականացվեց մինչև 1970-ականների սկիզբը, երբ նախագիծը տեղից շարժվեց Երևանի այն ժամանակվա գլխավոր ճարտարապետ Ջիմ Թորոսյանի, Սարգիս Գուրգադյանի և Ասլան Մխիթարյանի համատեղ ջանքերով: 1970-ականների սկզբին վերին հարթակի վրա տեղադրվեց հսկայական կոթողը, սակայն համալիրի զգալի հատվածներն ավարտելու համար պահանջվեց ևս մեկ տասնամյակ:

Այնուհանդերձ, չնայած այս նշանավոր պատմությանը և բազմաթիվ քարտեզների, ակնարկների և մատների ծայրերով որոնման համակարգերով ճանապարհորդելու շնորհիվ ժամանակակից աշխարհի ընթերցելիությանը, մինչև օրս դժվար է գտնել թե՛ Կասկադի համալիրին և թե՛ բռնաճնշումներին վերաբերող լիարժեք տեղեկատվություն:³³

²⁹ Laycock, “Survivor or Soviet Stories?” p.123 Laycock, “The Repatriation of Armenians to Soviet Armenia, 1945–49.”

³⁰ Suci, էջ 297:

³¹ Pierre Nora, “Between Memory and History: Les Lieux de Mémoire,” *Representations* 26 (1989): 7–24.

³² Թամանյանի մասին անգլերեն լեզվով գրականությունը սահմանափակ է: Նրա ընտանիքը ստեղծել է տեղեկատվական կայք՝ <http://www.alexandertamanian.com/>: Վիքիպեդիայի համապատասխան էջը ներկայացնում է 1974 թ. Հայկական սովետական հանրագիտարանի տվյալները՝ https://en.wikipedia.org/wiki/Alexander_Tamanian. Թամանյանի դերին վերաբերող քննարկում կարել է գտնել այստեղ. Levon Abrahamian, “Yerevan: Memory and Forgetting in the Organisation of Post-Soviet Urban Space,” *Russian Cultural Anthropology after the Collapse of Communism*. գրքում (Routledge, 2012):

³³ Վայրերի «պանոպտիկ ճանաչելիության» մասին տես նաև՝ Hans Gutbrod, “Brijuni or Brioni: Reviewing Tito’s Luxury Island,” *Baltic Worlds*, October 18, 2022, <https://balticworlds.com/brijuni-or->

Երևան գալուց առաջ անհրաժեշտ նյութ ստանալու համար ես այցելեցի գրեթե նույնքան կայքէջեր, որքան աստիճաններ ունի Կասկադի համալիրը:

Հուշահամալիրի շենքը կարծես թե անգամ չունի իր համաձայնեցված անգլերեն անվանումը: Սովորաբար այն նկարագրվում է որպես «Դաժանորեն բռնադատվածներին նվիրված հուշահամալիր»:³⁴ Մեկ այլ թեզ ներկայացնում է այն որպես «Զոհերի հուշահամալիր»: Այս հոդվածում բերվող անվանումը՝ «Կասկադի՝ բռնաճնշումների գոհերին նվիրված հուշահամալիր», փորձ է հաղթահարելու այն փուլը, երբ, ինչպես Գաբրիել Գարսիա Մարկեսն է ասել իր «Հարյուր տարվա մենության» առաջին տողերում, «աշխարհն այնքան նորաթուխ էր, որ շատ իրեր դեռ անվանում չունեին, և մարդիկ ստիպված էին մատնանշել դրանք»:

Երևանը լավ ճանաչող բնակիչների և այցելուների ոչ պաշտոնական հարցումը ցույց է տվել, որ միայն մեկ քառորդն է այցելել հուշահամալիրը, թեև հարցվածների շարքում եղել են մեծ թվով ակտիվիստներ, հետազոտողներ և քաղաքացիական հասարակության կարկառուն ներկայացուցիչներ, ընդ որում ավելի քան 77%-ն ասել է, որ լավ գիտի քաղաքը, իսկ մի քանիսը նշել են, որ կորցրել են ընտանիքի անդամներին խորհրդային բռնաճնշումների տարիներին:³⁵

Հուշահամալիրի գոյության մասին իմացող սակավաթիվ մարդկանց մեծ մասի համոզմամբ շենքը կառուցվել էր 2000-ականներին, քանի որ Զոհերի հուշահամալիրը պաշտոնապես բացվել է միայն 2008 թվականին: Մինչդեռ Google Earth-ի անցած շրջանի պատկերները վկայում են, որ 2000-ականներին շինությունը արդեն գոյություն է ունեցել, թեև այդ պատկերների վրա գմբեթը (կամ թմբուկը) հայտնվում է 2009 թվականի գարնանից սկսած: (Արբանյակային պատկերների նախնական ուսումնասիրումը թույլ է տալիս ենթադրել, որ հիմնական շինարարական աշխատանքները կատարվել են 1985-1999 թթ.³⁶):

Շատերը դժվարացել են նաև ասել, թե ի՞նչ կոթող է խոյանում Զոհերի հուշահամալիրի կողքին: Խոսքն այն կոթողի մասին է, որը կարելի է տեսնել մայրաքաղաքի տարբեր հատվածներից: Հարցման մասնակիցների (ընդ որում արդեն ընտրված խմբի) միայն 10%-ից քիչ մարդ չսխալվեց, նշելով, որ կոթողը խորհրդանշում է Խորհրդային Հայաստանի հորելյանը, իսկ մի քանիսը սխալմամբ ենթադրեցին, որ այն կապված է Երկրորդ

brioni-reviewing-titos-luxury-island/.

³⁴ Բնագրի տարբեր ձևակերպումների հետ կապված թարգմանության դժվարությունների վերաբերյալ այս հղումը պիտի ներկայացվի կոմերցիոն կրճատիչով, քանի որ հակառակ դեպքում այն շատ տող կգրադեցնի. <https://bit.ly/WikipediaRemebranceDay-ARM>

³⁵ 2022 թվականի հուլիսին տպավորություններ և հակիրճ մեկնաբանություններ ստանալու նպատակով ՀՌԿԿ-ն կազմակերպել էր առցանց հարցում անգլերեն լեզվով, որը տարածել էր իր հայաստանյան ցանցերի և էլ. փոստի միջոցով՝ ներառելով 55 հարցվողների, որոնց միացել էին նաև Երևան այցելած թբիլիսցիները: Հարցումը կազմակերպվել էր կամավորության և անանունության սկզբունքով:

³⁶ Այս նախնական եզրակացությունը բխում է Landsat-5-ի՝ Google Earth-ի միջոցով վերցված և ուշադրությամբ զննված պատկերներից (հեղինակի նշումներում): Պատկերները անորոշ են, բաց տեղերը շատ են, ինչը թույլ չի տալիս զալ որոշակի եզրակացությունների: 1990-ականների պատկերները դժվար են ճանաչվում: 1970-ականներից մինչև 1980-ականների կեսերը դրանք եղել են KH-9 Hexagon արբանյակի ծածկություն, որը հետազոտողները օգտագործել են Նախիջևանի, Ղարաբաղի և Գյումրիի համար: Ես երախտապարտ եմ Լորի Խաչատուրյանին, որն օգնեց ինձ իմանալու, թե արբանյակային ո՞ր պատկերներն են հասանելի:

համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի հետ:³⁷

Սա ցույց է տալիս, որ նշանավոր այս վայրը դեռևս չի գտել իր պատշաճ տեղը Երևանցիների մտային քարտեզի վրա: Մոտակայքում աշխատող և երկար տարիներ Երևանում բնակվող մի մարդ ասել է. «Այսօր ոչ ոք չգիտի, որ այն (կոթողը) նվիրված է Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակին. դժվար է բացատրել մարդկանց, այդ թվում՝ տաքսիստներին, թե որտեղ է գտնվում այդ վայրը: Ես սովորաբար ասում եմ «Կասկադի վերևում», բայց նրանք չեն հասկանում: «Մոնումենտի այգու դիմաց»-ը նույնպես բավարար չէ, ինչպես և «Կասկադի վերևի դիտահարթակ»-ը: Այժմ, երբ այնտեղ է գտնվում Արաբական Էմիրությունների դեսպանատունը, տաքսիստների համար ամենահեշտն այն է, որ ասեն «Էմիրությունների դեսպանատան կողքին»: Կարող եմ նաև ավելացնել. «որտեղ որ երեխաների համար սարքած գույնզգույն քանդակներն են»:³⁸

Ձոռների հուշահամալիրի պատմությունը, մասնավորապես՝ ե՛րբ է այն կառուցվել, ի՛նչ որոշումների հիման վրա, ինչու՛ է շինարարությունը կանգ առել մինչև 2008 թվականի պաշտոնական բացումը, ե՛րբ և ի՛նչ պատճառով է համալրվել, օրինակ՝ կենտրոնական սալաքարով և գմբեթով/թմբուկով՝ այս ամենը հարուստ հետազոտական նյութ է, որը պիտի «պեղվի» Երևանի քաղաքային արխիվից:

Անգամ հիմնական նյութը շարունակում է թաղված մնալ: Վիքիպեդիայում չկան անգլերեն լեզվով հոդվածներ ո՛չ ամբողջ հուշահամալիրի, ոչ՝ զոռների հուշարձանի, ո՛չ Ջիմ Թորոսյանի մասին, թեև նա այս նշանավոր ճարտարապետական կառույցի գլխավոր հեղինակն է: Մինչդեռ այս կառույցը արվեստի, ապրելակերպի, քաղաքային կապերի մի ամբողջ համաստեղություն է, կարևորագույն խորհրդանիշ, որի հայացքը, Երևանի բարձունքից անցնելով քաղաքի վրայով, հասնում է մինչև Արարատ լեռան հսկայական սառցե գլխարկը:³⁹ (Ոչ պաշտոնական հարցման մասնակիցների ավելի քան երկու երրորդի կարծիքով Կասկադի համալիրը պարզապես բարետես հավելում է Երևանի համայնապատկերին, իսկ մեկ երրորդի կարծիքով այն սիրված տեսարժան վայր է):

Ցանկացած անդրադարձ թորոսյանական Կասկադի հուշահամալիրի ստեղծմանը մինչև օրս դուրս չի գալիս անձնական հիշողությունների շրջանակից: Որոշ տեղեկություններ տրամադրեց Տեր-Գաբրիելյանը, որի հայրը և Թորոսյանը մանկության ընկերներ էին, քանի որ նրանց ընտանիքներն ապրում էին նույն շենքում: Տասներկու տարեկանում նրա հայրը տեսել է, թե ինչպե՛ս է ՆԳԺԿ-ն ձեռք բերվել Թորոսյանի հորը: Պետիկ Թորոսյանը եղել է «դատախազ, գուցե և գլխավոր դատախազ, որը սպանվել է 1937 թ.»: Տեր-Գաբրիելյանն ամփոփել է իր ծնողների որոշ հիշողություններ անձնական կայքում: Այժմ այդ հիշողությունները հասանելի են գրքի տեսքով:⁴⁰ «Սրանից արձակ կարծես չի ստացվում, - գրում է հեղինակը, - բայց կինոսցենար կստացվի: Քանի որ սա վայ թե երբեք չնկարվի ու երկար է, առաջարկում եմ մտովի կինո նայել»:

³⁷ Հարցվողները հավաքագրվել էին անգլալեզու հետազոտական ցանցերի միջոցով, ուստի չեն ներկայացնում բնակչության լայն խմբեր: Հետագա հետազոտությունները կարող են կենտրոնանալ Երևանցիների մտքի և հիշողության քարտեզների վրա:

³⁸ Taxists՝ «Տաքսիստներ»-ն այստեղ վերաբերում է տաքսու վարորդներին: Չեմ փոխել՝ հեղինակի ոճը պահպանելու համար. մեջբերում եմ հարցումից:

³⁹ Տես՝ <https://architectuul.com/architect/jim-torosyan> .

⁴⁰ Տես՝ Գևորգ Տեր-Գաբրիելյան. ««Անաստված» կինոթատրոնը». Հայաստան, Քսաներորդ դար, Բլոկբաստեր: «Անաստված կինո թատրոն» գրքում: Երևան, 2015: Համացանցային տարբերակը տե՛ս այստեղ. <https://gtergab.com/hy/news/books/the-godless-movie-theater/162/>

«Անաստված» կինոթատրոն»-ի առանցքային դրվագում գլխավոր հերոսը մոտենում է մի տղայի, ում հորը, «ձեռքերը ոլորած», հենց նոր տարել են: Որդին միայնակ կանգնած է բակում: «Վռամը մոտենում է նրան, փորձում հետը խաղալ, խոսեցնել: Նա ձայն չի հանում: Մայրը գալիս, նրա ձեռքից բռնում, տանում է տուն: Նա անկամ քայլում է, մայրը ձեռքից քարշ է տալիս»:

Տեր-Գաբրիելյանի սցենարն ավարտվում է 1950-ականներին՝ աննկարահանելի ավելի մեծ ֆիլմի մասին դրվագով, և ավելի փոքր վավերագրական ֆիլմի մասին պատմող դրվագով. ամերիկացի այցելուները ձյան միջով քայլում են Երևանից դուրս գտնվող նշանավոր հուշարձանների և տեսարժան վայրերի՝ Գառնիի և Գեղարդի միջև: Բռնաճնշումների ավիքը մարել է, բայց անցյալը շարունակում է հետապնդել մարդկանց, որոնք առայժմ հեռու են ազատ լինելուց:

Այս կարգի հիշողություններն արժանի են մեկտեղվելու և ավելի աչքառու տեղ գրավելու: Այս առումով շատ օգտակար է թվում Վիքիպեդիան, քանի որ տեղեկատվության կուտակման այս տարածքից նաև կապ է հաստատվում սկզբնական, այդ թվում և պահոցներում գտնվող տեքստերի հետ, որոնք հակառակ պարագայում կարող են մարզինալացվել կամ մոռացության մատնվել:⁴¹ Հայաստանում ստալինյան բռնաճնշումներին վերաբերող էջի տարբեր բաժիններում նշված է. «Այս բաժինը ամբողջական չէ: Դուք կարող եք մասնակցել նախագծին՝ լրացնելով ու շտկելով այն»:⁴²

Կանխատեսելով անվանականչը

Անունների աստիճանական ավելացումը կարող է նպաստել մեծ մասամբ կողպված հուշահամալիրի դերի վերաիմաստավորմանը: Այսօր համալիրի ներսում կարելի է տեսնել միայն հատուկենտ այցելուների փոշու մեջ թողած հետքերը: Կարելի է մտածել համալիրն արդիականացնելու և այցելուների մուտքը ավտոմատ համակարգի միջոցով կատարելագործելու մասին, երբ ցանկացած այցելու մուտք գործելու իրավունք ստանալու համար պետք է բարձրաձայն արտասանի բռնաճնշումների մեկ գոհի անունը, տարիքը, մասնագիտությունը, բնակավայրը և վճռի կատարման ամսաթիվը: Այս անվանականչը կարող է նաև ցույց տալ, թե դեռ քանի անուն կա կարդալու, որպեսզի հիշվեն բոլոր գոհերը, որքան ժամանակ կպահանջվի, որպեսզի բոլորի անունները արտասանվեն, անվանականչի մեկ փուլն ավարտվի և հերթական անունը նորից արտասանվի և հիշվի:⁴³ (Կարելի է պատկերացնել նաև ընդլայնված տարբերակ, երբ որևէ անուն արտասանվելուց հետո հասանելի է դառնում նաև այլ այցելուներին): Ոգեկոչման այս տարբերակը թույլ կտա կապել յուրաքանչյուր այցելություն մեկ անհատի ճակատագրի հետ և անդրադառնալ նրա կյանքին: Դա տեղի ունեցավ ինձ հետ վերը նշված երկու անունները կարդալիս:

⁴¹ Վիքիպեդիայի միջոցով նման աշխատանք կատարելու մասին տես՝ Christian Pentzold, “Fixing the Floating Gap: The Online Encyclopaedia Wikipedia as a Global Memory Place,” *Memory Studies* 2, no. 2 (May 1, 2009): 255–72, <https://doi.org/10.1177/1750698008102055>. Այն երկրներում, որտեղ հրատարակչական ոլորտը դեռ զարգանալու տեղ ունի, Վիքիպեդիայի հնարավոր դերը մինչ այժմ համեմատաբար քիչ ուշադրության է արժանացել:

⁴² Այս դեպքում նույնպես տարբեր այբուբեններով հղումը ներկայացնելու համար պահանջվում է կրճատիչ: Տես՝ <https://bit.ly/WikipediaARMRepressions-Link>

⁴³ Անվանականչի այս արարողությունը ընկած է բազմաթիվ սգո և ոգեկոչման ծեսերի հիմքում և սկիզբ է առել Միջագետքում: Այդ մասին տես՝ Miranda Bayliss, “The Cult of Dead Kin in Assyria and Babylonia,” *Iraq* 35, no. 2 (1973): 115–25, <https://doi.org/10.2307/4199959>. Էջ. 117:

Ձայնագրման համակարգով հագեցած նման հուշարձանը կարող է առաջացնել վերահսկման ժամանակակից խնդիրների հետ կապված որոշ մտահոգություններ: Ցանկանում ենք մենք արդյոք, որ մեր մասին իմանան և մեր ձայնը լսվի և արձանագրվի: Դպրոցականների համար նման այցելությունները կարող են հիշարժան փորձ դառնալ:

Ոգեկոչման տեսակետից, թերևս, նշանակություն չի ունենա, թե որքան ժամանակ կպահանջվի այս անվանականն ավարտելու համար՝ մեկ թե տասը տարի, անշուշտ, եթե երաշխավորվի, որ անունները չեն մոռացվի:

Եթե դիտարկենք այս ամենը որպես կոնցեպտուալ արվեստ, ապա, մուտքի վճար սահմանելով անվանականի համար, կարելի է դասել հուշահամալիրը Կասկադում և Գաֆէսճյան արվեստի կենտրոնում գործող այն ցուցահանդեսների շարքում, որտեղ ներկայացված են Ֆերնանդո Բոտերոյի, Ժաուսե Պլենզայի, Ջոանա Վասկոնսելուսի և այլոց աշխատանքները:⁴⁴ Գաղափարը մանրամասնորեն մշակելու նպատակով հայտարարված մրցույթը կարող է գրավել Հայաստանում և արտասահմանում բնակվող արվեստագետների և դիզայներների ուշադրությունը:

Քաղաքի հիշողությունը թարմացնելու համար կարելի է դիմել նաև ավելի հանդուգն քայլի. տեղափոխել Թամանյանի արձանը Հանրապետության հրապարակ, որի տարածքում Լենինի արձանը հանելուց հետո դատարկություն է առաջացել: Այդպիսով ճարտարապետի արձանը կներկայացնի բոլոր նրանց, ովքեր օգնել են ամենադաժան պայմաններում կառուցել Հայաստանը և վերստեղծել նոր տունը: Թամանյանը նախագծել է հրապարակը և հրապարակի առանցքային շինությունները: Ճարտարապետը վայելում է բավարար հեղինակություն, ինչի վկայությունն է նրա պատկերը 500-դրամանոց թղթադրամի վրա:

Ներկայումս Հանրապետության հրապարակը, ինչպես նշել է Դիանա Տեր-Ղազարյանն իր ուշագրավ վերլուծության մեջ, «մի վայր է, որը ներկայացնում է հայերի երկակի վերաբերմունքն իրենց հավաքական ինքնության նկատմամբ, և այն վայրը, որը վառ կերպով ցույց է տալիս անհամաձայնությունը և հակասությունը ինքնության պաշտոնական նարատիվի և Հայաստանի բնակչության ընկալումների միջև»:⁴⁵ Հանրապետության հրապարակը լցնելու այլ փորձերը կարծես թե հաջողությամբ չեն պսակվել: Երևանի կերպարը ստեղծողին մայրաքաղաքի խորհրդանշական սիրտը բերելը կարող է լրացնել այդ դատարկությունը:

Թամանյանի տեղը՝ Կասկադի ստորին հատվածում, կարելի է տեղադրել Ջիմ Թորոսյանի արձանը՝ համալիրի մանրակերտով, և հղում տալ Կասկադի հուշահամալիրին՝ Թորոսյանի սեփական ընտանիքի կրած կորստները ընդգծելու համար: Տեղափոխումը կարելի է իրականացնել հունիսի 14-ին, որպեսզի շեշտվի ամսաթվի կարևորությունը:

⁴⁴ Արվեստի կենտրոնի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <https://www.cmf.am/Artists>. Նման փորձի որոնումն առայժմ չի ապացուցել, որ գոյություն ունեն մուտք գործելու այդպիսի համակարգեր, թեև որոշ հուշահամալիրային թանգարաններ որպես ուղեցույց այցելուներին տրամադրում են կենսագրական տվյալներ: Թանգարանների և կենսագրությունների միջև կապն ուսումնասիրվում է հետևյալ գրքում. Alexandra Stara և այլք., *Museums and Biographies: Stories, Objects, Identities*, ed. Kate Hill (Suffolk, UK ; Rochester, NY: Boydell Press, 2012).

⁴⁵ Տես՝ Diana K. Ter-Ghazaryan, “‘Civilizing the City Center’: Symbolic Spaces and Narratives of the Nation in Yerevan’s Post-Soviet Landscape,” *Nationalities Papers* 41, no. 4 (July 2013): 570–89, <https://doi.org/10.1080/00905992.2013.802766>.

Ինչպես փաստել է Շագոյանն իր փայլուն հոդվածում, Չոհերի հուշարձանի տեղադրման վերաբերյալ Երևանում տեղի ունեցած քննարկումը վերածվել է բուռն բանավեճի:⁴⁶ Նման փոփոխությունների քննարկումն ինքնին հնարավորություն կտա քաղաքացիներին և մասնակցելու, և՛ խորհելու, թե որտե՛ղ, նրանց կարծիքով, պիտի լինի իրենց անցյալը և ինչպե՛ս պիտի այն ցուցադրվի:

Դեպի ավելի քաղաքակիրթ խոսույթի ձևավորում

Խոսքը, սակայն, ոչ միայն և ոչ այնքան հուշահամալիրների, որքան Հայաստանի անկայուն ժողովրդավարությունը վտանգող՝ ավելի խորքային մարտահրավերի մասին է: Հունիսի 14-ի ցերեկվա նիստի մասնակիցները կարծես թե համաձայնության եկան, որ երկիրը շարունակում է կրել բռնության պատմության իր ծանր բեռը: Հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանում այդ հարցին չէր կարելի բացեիքաց անդադառնալ, սակայն անդադարձ չկատարվեց նաև անկախությունից հետո, ինչը հանգեցրեց բռնության մշակույթին և թույլ տվեց, որ անցյալը մի զգալի մասով թափանցի ներկա: «Մենք չկարողացանք կառուցել մի պատ, որը ներս չէր թողնի անցյալը»: Ոչ բոլորի համար է ընդունելի այն միտքը, որ նման պատ կարելի է և պիտի կանգնեցվի, սակայն Կասկադի հուշահամալիրն ի՛նքն է պարտադրում իր սեփական նշանային իմաստը, թույլ չի տալիս, որ անցյալը մնա լրիվ պարփակված իր համար նախատեսված՝ հիմնականում անհայտ վայրում:

Քննարկման մասնակիցները շեշտեցին, որ Ցեղասպանությունն ուղղակիորեն համեմատելի չէ խորհրդային բռնաճնշումների հետ, սակայն նրանք համաձայնեցին, որ վերջիններիս պատմությունը մնում է մարզինալացված: Մասամբ իր անցյալի համար պատասխան տալուց շեղելու նպատակով 1960-ականների կեսերի կոմունիստական դեկավարությունը շեշտը դրեց ցեղասպանության վրա, ստեղծված իրավիճակում այդ միտումն առնվազն տեղին համարելով:⁴⁷ Կարելի է ասել, որ շատ և շատ հայերի համար պատմության դասերը կապված են իրենց նկատմամբ գործած հանցանքի հետ:⁴⁸ Տրավման միանգամայն իրական է և մինչև օրս նկատելի է գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիքում:

Այն միայն հիշողության հետ կապված ցավ չէ: 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի սանձարձակ հարձակումը Հայաստանի կողմից վերահսկվող Ղարաբաղի վրա չունե՛ր ո՛չ բարի նպատակներ, ո՛չ լեգիտիմություն, ո՛չ համաչափություն:⁴⁹ Հայերը, և հատկապես կանայք, դարձել են ատելության խոսքի թիրախ:⁵⁰ Ադրբեջանի հերթական հարձակումը

⁴⁶ Stü` Gayane A. Shagoyan, “Between Memory and Memorial: Anastas Mikoyan and ‘Social Lustration’ in Armenia,” *Caucasus analytical digest*, no. No. 80 (February 16, 2016), <https://www.laender-analysen.de/cad/pdf/CaucasusAnalyticalDigest80.pdf>.

⁴⁷ Այս վերաիմաստավորման ավելի մանրամասն ուսումնասիրությունը տես՝ Maike Lehmann, “Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia,” *Slavic Review* 74, no. 1 (ed 2015): 9–31, <https://doi.org/10.5612/slavicreview.74.1.9>.

⁴⁸ Ուշագրավ վերլուծությունների հետ ծանոթանալու համար տես՝ Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, and Norman Naimark, “Introduction: Leaving It to the Historians,” *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, 2011, 3–11., էջ. 11:

⁴⁹ 2020 թվականի սեպտեմբերի հակամարտության էթիկայի մասին տես՝ Hans Gutbrod, “Assembling the Moral Puzzle – Just War Tradition and Karabakh,” *Global Policy Journal*, February 25, 2021, <https://www.globalpolicyjournal.com/blog/25/02/2021/assembling-moral-puzzle-just-war-tradition-and-karabakh>.

⁵⁰ Հետապնդման է ենթարկվել անգամ զսպվածության կոչերով հանդես եկած ադրբեջանուհի

2022 թվականի սեպտեմբերին և այս անգամ արդեն ճանաչված սահմանի խախտումը ստիպեց նույնիսկ պթափ մտածող երևանցիներին անհանգստանալ և մտածել, որ գուցե և պետք է համենայն դեպս հավաքել ճամպրուկները:⁵¹ Ամփոփելով կարելի է ասել, որ գոյատևման խնդիրը իրավամբ ստիպում է հայերին չկորցնել զգոնությունը:⁵²

Միննույն ժամանակ հայերը, կարծես թե, առանձնապես տեղյակ չեն այն մասին, թե ի՞նչ են արել իրենց ենթադրյալ դաշնակիցները իրենց հետ պատմության ընթացքում և ինչպե՞ս են վարվել այդ նույն դաշնակիցները միմյանց հետ: Բռնաճնշումները հրահրվում էին Մոսկվայից՝ ի թիվս այլոց նաև Լավրենտի Բերիայի կողմից: Համարվում է, որ մինչ ամենօրյա բռնություններն իրականացնում էին տեղական իշխանությունները և հանցագործները, 1936 թվականի կեսերին Թբիլիսիում Բերիան անձամբ սպանել է Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Այս ամենը կարելի է գտնել նաև Տեր-Գաբրիելյանի սցենարում:⁵³

Թերևս տրավմա ապրածներն այնքան բարի չեն միմյանց հանդեպ, որքան կարելի էր ակնկալել: Վերջին ամիսներին գրած իր բաց նամակում երաժիշտ և ակտիվիստ Մերժ Թանկյանը, որը խոսքի մեջ խտրություն դնելու սովորություն չունի, դատապարտել է «հայ հասարակության մեջ առկա պառակտումները: Այդ բաժանումը, բռնությունն ու դավաճանական դատապարտումները ժամանակի ընթացքում մետաստազներ են տվել և դուրս են եկել վերահսկողությունից: Դրանք ջլատում են հասարակությունը և ստելության մթնոլորտ են ստեղծում Հայաստանում և սփյուռքում: Ժամանակն է վերջ դնել դրան»:⁵⁴ Նրա հակառակորդները հակադարձել են, նշելով, որ Թանկյանը չափազանց կոշտ արտահայտամիջոցներ է օգտագործել ուրիշների նկատմամբ:⁵⁵ Կան նաև քննադատներ, որոնց կարծիքով Թանկյանը ընկալում է քաղաքականությունը որպես իր երկրպագուներին միավորելու միջոց, այլ ոչ թե ելնելով քաղաքացիական

լրագրողը: Այդ մասին տես՝ Aneeta Mathur-Ashton, “Campaign of Hate Forces Azeri Journalist Offline,” VOA, accessed November 19, 2022, https://www.voanews.com/a/press-freedom_campaign-hate-forces-azeri-journalist-offline/6200504.html.

⁵¹ Խոսակցություն էրեք ամերիկացի դիվանագետների հետ, որոնք ստացել են այս տեղեկությունները տեղի դեսպանատան աշխատակիցներից, 2022 թվականի հոկտեմբեր:

⁵² Թեև հայ խաղաղ բնակիչների և ռազմագերիների դեմ իրականացված տարբեր ռազմական հանցագործությունները մանրամասնորեն փաստագրված են, ինչպես երևում է, աղբյուրներից հանցագործներից և ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկվել: Այս կապակցությամբ իմ և Կանադայում և Չեխիայում Աղբյուրների նախկին դեսպանի մտքերի փոխանակումը տես՝ https://twitter.com/shafiyev_farid/status/1576651130854993920?s=20&t=AY3HQULiXe-2Sifq-cbGMA (նաև Վեբ արխիվում).

⁵³ Տես՝ Suny, “Soviet Armenia.” էջ. 362: Տեր-Գաբրիելյանն իր գործում գրեթե չի շեշտում այդ փաստը, սակայն՝ ըստ որոշ երևանյան գրուցակիցների, նրա ազգականներից մեկը, ով 1930-ականներին բարձր քաղաքական պաշտոն էր զբաղեցնում, նույնպես այսպես կոչված «գտումների» գոհ էր դարձել: Տես՝ Shakarian, “Yerevan 1954: Anastas Mikoyan and Nationality Reform in the Thaw, 1954–1964.”

⁵⁴ Հիմնականում անդրադառնալով արտաքին քաղաքականությանը վերաբերող տարաձայնություններին՝ Թանկյանը նկատի ունի նաև քաղաքական բանավեճի ընդհանուր երանգը: Տես՝ <https://twitter.com/serjtankian/status/1535730495585017857?s=20&t=UqEOsaYSBgyG5HOaPZ7zCg>, ինչպես նաև Վեբ արխիվը:

⁵⁵ Տես՝ <https://thearmenite.com/2022/06/serj-tankian-unleashes-vulgar-tirade-on-fellow-armenians/>.

նկատառումներից:⁵⁶

Թեև տեսակետները տարբերվում են, քչերն են կասկածում, որ պատակտումը գնալով խորանում է: Անի Պողոսյանը, որը զբաղվում է մարդու իրավունքների, կրթության և արվեստի հարցերով և ակտիվորեն ներգրավված է սոցիալական ցանցերում, նույնպես նշում է. «Ահա Թվիթերում իմ հաճախ չհայտնվելու 16963-րդ պատճառը. պատահական հայն ատում է ինձ առանց ինձ անձամբ ճանաչելու: Անկեղծ ասած, ես կարող եմ ապրել առանց այդ էներգիայի»:⁵⁷ Տվյալները վկայում են, որ արատավոր այս իրավիճակն իրոք մտահոգվելու տեղիք է տալիս: Համաձայն ՀՌԿԿ-ի Կովկասյան բարոմետրի՝ հայերի 52 տոկոսի կարծիքով «սոցիալական մեդիան» հիմնականում բացասաբար է ազդում «իրերի ընթացքի վրա», մինչդեռ հարևան Վրաստանում բնակչության միայն 27 տոկոսն է համարում, որ դա այդպես է:⁵⁸

Թեև առցանց բանավեճերում կոշտ տոնայնության առկայությունը միայն Հայաստանի առանձնահատկությունը չէ, Թանկյանը նշում է, որ «[մենք] փոքր ազգ ենք՝ քիչ բնական ռեսուրսներով», և որ ստեղծված անկայուն իրավիճակում Հայաստանի «միակ փրկությունը» միասնությունն է: «Մենք պիտի մեկընդմիջտ կոտրենք անզիջողականության մեր գենետիկ հազարամյա կոդը»: Սակայն մի թե իրավացի է երաժիշտը, պնդելով, որ անզիջողականությունը գենետիկ երևույթ է:

Եթե ընդունենք, որ այս խնդիրը չի լուծվի, եթե լռության մատնվի, գուցե ուշադրության կենտրոնացումը խորհրդային ժամանակաշրջանի բռնաճնշումների և տեղահանումների վրա կարող է դառնալ այն միջոցը, որը կօգնի վերակառուցել հանրային քննարկումները, ընդ որում ոչ միայն ըստ էության, այլև ոճի և տոնայնության առումով: Լավատեսական սցենարի դեպքում այն մասամբ տեղի կունենա որպես հարգանքի նշան ավտորիտար կարգերի այն հպատակների հանդեպ, որոնց կյանքը տակնուվրա եղավ բռնության նախորդ այլքների պատճառով («Նա ձայն չի հանում: Մայրը գալիս, նրա ձեռքից բռնում, տանում է տուն: Նա անկամ քայլում է, մայրը ձեռքից քարշ է տալիս»), ինչպես նաև որպես խոհեր այն մասին, որ հանգամանքները կարող են ստիպել մեզ պատմության սխալ կողմն անցնել և որ, թեև զսպվածությունը չի պաշտպանի մեզ սխալներից, այն հավանաբար կնվազեցնի սխալվելու հետևանքով մեր հասցրած վնասը:

Բոցաշունչ բանաստեղծ Եղիշե Չարենցի կյանքը՝ այն բանաստեղծի, ում տողերը մեջբերված են Կասկադի հուշարձանի վրա, արտացոլում է 20-րդ դարասկզբի հայոց

⁵⁶ Էլեկտրոնային նամակագրության ընթացքում տեղ գտած մեկնաբանություն: Տես նաև՝ Kevin EG Perry, “System of a Down’s Serj Tankian: ‘If Something Is True, It Should Be Said,’” *The Guardian*, March 24, 2021, sec. [Music](https://www.theguardian.com/music/2021/mar/24/serj-tankian-system-of-a-down-armenia), <https://www.theguardian.com/music/2021/mar/24/serj-tankian-system-of-a-down-armenia>.

⁵⁷ Տես՝ <https://twitter.com/aniboghoss/status/1540337935400243202?s=20&t=UqEOsaYSBgyG5HOaPZ7zCg> (սքրինշոթ ինտերնետային արխիվում).

⁵⁸ Տվյալները «Կովկասյան բարոմետր»-ից են՝ 2021 թ. հետազոտությունից: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան, դաշտային աշխատանքների ժամկետները՝ 2021 թվականի դեկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը, տես՝ <https://twitter.com/HansGutbrod/status/1544703617348902914?s=20&t=UqEOsaYSBgyG5HOaPZ7zCg>, Սքրինշոթը պահպանված է նաև ինտերնետային արխիվում. դիտորդների մեծամասնությունը կարծես համաձայն է, որ սոցիալական մեդիայի տոնայնությունը ավելի բացասական է դարձել 2020 թվականին Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի վրա հարձակումից հետո: Թերևս, այս հարցում իրենց դերն ունեն նաև տրոլները, չնայած կարծես թե առցանց տարածքը առայժմ լրջորեն չի ուսումնասիրվել:

պատմության լայն շրջանը: Ծնվել է Կարսում 1897 թվականին, երիտասարդ տարիներին դարձել բոլշևիկ, իսկ 1920-ական թվականներին կարևորագույն դերը ստանձնել հրատարակչական ասպարեզում և գրողների շրջանում:⁵⁹ Ի վերջո նրան վիճակված էր դառնալ խորհրդային բռնաճնշումների զոհ. 1937-ին նա ձերբակալվեց և նույն տարվա նոյեմբերին մահացավ բանտում անհայտ հանգամանքներում: Ենթադրվում է, որ նա նույնպես սպանվել է:

Այսօր Չարենցը պատկերված է 1000 դրամանոց թղթադրամի վրա, սակայն մեկ, անգամ մեծատաղանդ մարդու ճակատագրի ճանաչումը չպիտի սովերի բազմաթիվ այլոց տառապանքը: Բռնաճնշումների դաժանության խոսուն վկայությունն է նաև այն, ինչ կատարվեց Չարենցի ընտանիքի կանանց հետ: Բանաստեղծի մահից հետո նրա կինը ձերբակալվեց և երկար տարիներով աքաղաղվեց Սիբիր, իսկ տասիկը, ինչպես վերջերս պատմեց ընտանիքի ժառանգը Չարենցի թանգարանում շրջայցի ժամանակ, ի վիճակի լինելով խնամել իր զարմուհիներից միայն մեկին, ստիպված եղավ մյուսին հանձնել մանկատուն:⁶⁰ Այսօր Չարենցի ընտանիքի անդամները պարբերաբար այցելում են Երևանի կենտրոնում գտնվող նրա արձանը. «Այլ տեղ չունենք գնալու, չգիտենք, թե որտեղ է թաղվել»:⁶¹

Չարենցի անվան վերադարձը կապված է ուշագրավ պատմության հետ: Ինչպես նշում է պատմաբան Պիետրո Շաքարյանը, խորհրդային շրջանի բարձրաստիճան քաղաքական գործիչ Անաստաս Միկոյանը, որի քաղաքական ճկուն նավարկումները հայտնի էին, և որը ճիշտ ժամանակին դարձավ Նիկիտա Խրուշչովի բարեփոխումների ծրագրի ջատագովը, 1954 թվականի մարտին կայացած ելույթում հիշատակելով Չարենցին, առաջին անգամ շարադրեց ազգային քաղաքականության ռեպրեսիվ բնույթը մեղմացնելու անհրաժեշտության գաղափարը:⁶² Երբ Միկոյանն ասաց, որ Չարենցի ձերբակալությունը «սխալ» է եղել, դահլիճում բուռն ծափահարություններ հնչեցին և տևեցին մոտ 30 վայրկյան:

Ըստ երևույթին, հենց այս դեպքից հետո էր ընկերներից մեկը համարձակվել ի հայտ բերել Չարենցի չիրատարակված ձեռագրերով ճամպրուկը: Մեկ տարի անց Չարենցի անունը,

⁵⁹ Չարենցի և այդ ժամանակաշրջանի այլ բանաստեղծների մասին տես՝ James R Russell, “The Black Dervish of Armenian Futurism,” *Journal of Armenian Studies*, 2014. Կա ևս մեկ գիրք, որը ես չկարողացա ձեռք բերել՝ Կովկասում գործող սահմանափակումների պատճառով, թեև այն առկա է Google Books-ում: Տես՝ Marc Nichanian, *Yeghishe Charents: Poet of the Revolution*, Armenian Studies Series. 5 (Costa Mesa, California: Mazda Publishers, 2003), <http://www.mazdapublishers.com/book/yeghishe-charents-poet-of-the-revolution>.

⁶⁰ Սա Չարենցի երկրորդ կինն էր՝ Իզաբելլան, իսկ առաջին կինը՝ Արփենիկը, մահացել էր 1927 թ.-ին, ինչպես պնդում է մի բլոգ՝ հղիության հետ կապված բարդություններից: Vigen Avetisyan, “The Love Story of Yeghishe and Arpenik Charents,” *Art-A-Tsolum* (blog), March 1, 2019, <https://allinnet.info/culture/the-love-story-of-yeghishe-and-arpenik-charents/>.

⁶¹ Այցելություն Երևանի Չարենցի թանգարան՝ բանաստեղծի թոռնուհու՝ Գոհար Չարենցի ուղեկցությամբ 2022 թվականի հոկտեմբերին:

⁶² Հայ գործընկերներիցս մեկն ասաց, որ խորհրդային տարիներին շրջանառվում էր Միկոյանի հետ կապված հետևյալ կատակը. «От Ильича (Владимир Ильич Ленин) до Ильича (Леонид Ильич Брежнев) без инфаркта и паралича». Նա ակտիվորեն մասնակցել է 1937 թվականի գտումների կազմակերպմանը: “Anastas Mikoyan: Soviet First Responder and Smiling Diplomat | National Security Archive,” մուտքը՝ 2022 թվականի նոյեմբերի 19-ին - <https://nsarchive.gwu.edu/briefing-book/cuba-russia-programs/2020-12-18/anastas-mikoyan-soviet-first-responder-smiling-diplomat>.

պատիվը և իրավունքները վերականգնվեցին:⁶³ Այս պահը նշվում է նաև Տեր-Գաբրիելյանի սցենարում, որը սկսվում է «մոտավորապես 1954-ին», երբ դպրոցի ուսուցչուհին «շատ ուրախալի լուր» է կիսում իր աշակերտների հետ «հոյակապ պոետ, շատ տաղանդավոր, Եղիշե Չարենց»-ի մասին. «Մինչև հիմա մենք նրա մասին չէինք խոսում, սակայն այժմ արդեն կարելի է խոսել»:⁶⁴

Հայաստանում ակտիվիստները կարող են ավելի մեծ ջանք գործադրել՝ վերականգնելու Չարենցի ճակատագրին արժանացած հարյուրավոր կամ հազարավոր մարդկանց անունները: Անուններ և ճակատագրեր, որոնք հիմնականում մոռացված են: Այս հարցում կարևոր դեր պիտի խաղա նաև Հայաստանի նախագահը, քանի որ 2018 թվականի սահմանադրական բարեփոխումներից ի վեր, որոնք իրենց հերթին սկիզբ դրեցին թավշյա հեղափոխությանը, նախագահի գրասենյակն առաջին հերթին արարողակարգային դեր է կատարում:⁶⁵ Որոշակի սահմանափակում լինելով հանդերձ սա նաև մեծ պատասխանատվություն է՝ լուծելու այնպիսի հարցեր, որոնց խորհրդանշական դերն այնքան մեծ է, որ դրանք չեն կարող և չպիտի լուծվեն քաղաքական գործիչների ամենօրյա աղմկալի բախումների ընթացքում:⁶⁶

Համալսարանների և հետազոտությունների դերը

Տեղական համալսարանները կարող են անել ավելին, քան անում են, օգտագործելով Վիքիպեդիան՝ հասարակությանը իրազեկելու և մարզինալացված գիտելիքը վերակենդանացնելու համար: Այս համագործակցային հարթակի նկատմամբ լայն տարածում ստացած թերահավատությունը անհիմն է և օգուտ չի բերում ո՛չ ուսանողներին, ո՛չ հասարակություններին:

Ժամանակակից համալսարանները ներգրավված են ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական գործընթացներում: Այնուհանդերձ, այս հումբոլդյան մոդելը չափազանց նեղ է թվում: Հետազոտությունները սովորաբար վերաբերում են նորարարությանը և հրապարակվում են հեռավոր, դժվար հասանելի ամսագրերում: Նույնիսկ ակադեմիական վկայականների առկայության պարագայում այդպիսի ամսագրում այս աշխատությանն ուղղակիորեն վերաբերող մեկ հոդվածի հետ ծանոթանալը (մուտք գործելը) արժե 47 դոլար (ամսագրի ամբողջ համարը կարելի է ներբեռնել 386 դոլարով):⁶⁷ Շատ դեպքերում ավելի կարևոր է ապահովել այնպիսի գիտելիքի հասանելիությունը, որը կօգնի

⁶³ Այս մասին դարձյալ տես՝ Shakarian, “Yerevan 1954: Anastas Mikoyan and Nationality Reform in the Thaw, 1954–1964.”. Նա նաև հղում է անում Միկոյանի 1954 թվականի մարտի ելույթի ձայնագրությանը:

⁶⁴ Գևորգ Տեր-Գաբրիելյան. «Անաստված» կինոթատրոնը». Հայաստան, Քսաներորդ դար, Բլոկբաստեր: «Անաստված» Կինո թատրոն» գրքում:

⁶⁵ Laurence Broers, “In Armenia, a Constitutional Power Grab Backfires,” Expert Comment, Chatham House, April 24, 2018, <https://www.chathamhouse.org/2018/04/armenia-constitutional-power-grab-backfires>.

⁶⁶ Վրաստանում Ստալինի թանգարանի վերաբերյալ նման փաստարկի հետ ծանոթանալու համար տես՝ Hans Gutbrod, “The Ethics of Political Commemoration: The Stalin Museum and Thorny Legacies in the Post-Soviet Space – PONARS Eurasia,” *PONARS Eurasia*, Մարտի 23, 2022, <https://www.ponarseurasia.org/the-ethics-of-political-commemoration-the-stalin-museum-and-thorny-legacies-in-the-post-soviet-space/>.

⁶⁷ Տես՝ <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/09546545.2015.1097091> .

քաղաքացիներին հասկանալ իրենց անցյալը, գնահատել ներկան և ապագան:⁶⁸ Այլ կերպ ասած, հետազոտությունների մեծ մասը՝ այնքանով, որքանով դրանք կատարվում են, նման է բարդ նյութագիտությանը: Տեղային և մատչելի գիտելիք տալը նման է կահույք պատրաստելուն: Նյութագիտությունը կարող է օգնել լուծելու այդ խնդիրը, սակայն, սահմանափակելով համալսարաններն այդ առաքելությամբ, հնարավոր չէ մեծ օգուտ տալ ուսանողներին և վերջին հաշվով՝ հասարակություններին:

Եթե համալսարանները դիտարկվում են որպես արտադրական հաստատություններ, ապա պետք չէ զարմանալ, որ ուսանողները զգում են իրենց օտարված և իրավագույրկ. այն տեսություններն ու տեքստերը, որ նրանք ուսումնասիրում են, քիչ առնչություն ունեն նրանց շրջապատի, նրանց ընտանիքներում կատարվածի հետ, ինչպես նաև այն ամենի հետ, ինչը ձևավորել է նրանց սոցիալական սովորությունները և այսօրվան հանգեցրած կառույցները:⁶⁹

Անմիջական ներգրավվածության բացակայությունը բերում է կորուստների ոչ միայն չօգտագործված ներուժի, վատնած ժամերի և օրերի առումով, երբ տնային աշխատանքները և քննություններին նախապատրաստվելը մակերեսային, հպանցիկ բնույթ են ստանում և արածն անմիջապես մոռացվում է, այլև մարդկային ջանքերը կազմակերպված ձևով ի չիք դարձնելու առումով: Այն ժամանակ, երբ ակադեմիական արտադրանք տալու միջոցները շատ ավելի քիչ հնարավորություններ էին ընձեռում գիտելիքի կուտակման և համագործակցության բարելավման համար, նման կորուստներն այլընտրանք չունեին: Մակայն համացանցի առկայության պայմաններում աշխարհը դարձել է արդյունավետ հարաբերությունների տարածք, և, ինչպես ցույց են տալիս Վիքիպեդիայի բացերը, ուսանողները կարող են բերել իրենց մասնակցությունը՝ լրացնելով և ուղղելով նյութը:⁷⁰

Նման մոդելների միջոցով ներգրավվածությունը մեծացնելու գաղափարներն արդեն իսկ առկա են: Ինչպես նշում են որոշ հետազոտողներ, առցանց մասնակցության շնորհիվ Վիքիպեդիան կարող է հանդես գալ որպես «եզակի տարածք... գիտելիքի, հիշողության և մշակույթի կառուցման համար»:⁷¹ Զանգվածային լրատվամիջոցների հետազոտող Քրիստիան Պենտզոլդը նույնպես պնդում է, որ Վիքիպեդիան «հիշողության դիսկուրսիվ կազմակերպման և առցանց զարգացման ընթացքում հիշողության աշխատանքի տարբեր դիտարկելի քայլերի իդեալական օրինակ է ներկայացնում»:⁷² Ելնելով դրանից՝ նա նկարագրում է Վիքիպեդիան որպես «աշխարհի հիշողության վայր [...], որտեղ հիշվելու

⁶⁸ Այս մասին տես նաև հնագիտության միջոցով հանրությանը ներգրավելու հետևյալ քննարկումը. Katherine M. Grillo and Daniel A. Contreras, “Public Archaeology’s Mammoth in the Room: Engaging Wikipedia as a Tool for Teaching and Outreach,” *Advances in Archaeological Practice* 7, no. 4 (2019): 435–42, <https://doi.org/10.1017/aap.2019.8>.

⁶⁹ Գիտելիք արտադրելու և Վիքիպեդիայի մասին տես՝ Roy Rosenzweig, “Can History Be Open Source? Wikipedia and the Future of the Past,” *The Journal of American History* 93, no. 1 (2006): 117–46, <https://doi.org/10.2307/4486062>.

⁷⁰ Վիքիպեդիան ակադեմիական դասավանդման մեջ ներդնելու կառուցվածքային մոտեցման մասին տես <https://wikiedu.org/>: Թեև այս վեբ էջը տարբեր ռեսուրսներ է տրամադրում, առայժմ հիմնական ջանքերը կենտրոնացած են ԱՄՆ-ի և Կանադայի վրա:

⁷¹ Jutta Haider և Olof Sundin, “Beyond the Legacy of the Enlightenment? Online Encyclopaedias as Digital Heterotopias,” *First Monday* 15, no. 1 (2010).

⁷² Stu` Pentzold, “Fixing the Floating Gap.”, էջ 267:

արթմանի հանգամանքների շուրջ բանակցություններ են ընթանում»:⁷³ Այժմ կարելի է կենտրոնանալ այն հարցի վրա, թե ինչպես է այդ վայրը կարող ծառայել որպես տեղական հիշողության վայր, հատկապես մարզինալացման պայմաններում:⁷⁴

Այս լույսի ներքո նպատակահարմար է թվում Կրթության նախարարությունը դիտարկել որպես Կասկադի հուշահամալիրի ինստիտուցիոնալ տուն: Արմատական մոտեցումը կպահանջեր, որպեսզի բոլոր հասարակական և հումանիտար գիտությունները նպաստեն ժառանգության վայրերի շարունակական բացահայտմանը: Լավ է, երբ ուսանողը համալսարանում, ասենք, ֆրանսերեն է սովորում: Մակայն շատ ավելի լավ կլինի, եթե այդ հմտությունները գործնական դրսևորում ստանան, օրինակ՝ հարստացնելով Վիքիպեդիան Չարենցի նվիրված ֆրանսերեն հոդվածով, ընդ որում պատշաճ ձևակերպումներն ապահովելու համար դասախոսները և ուսանողները կարող են աշխատել միասին:⁷⁵

Նման միկրոնեղորումների շնորհիվ ուսանողները, համագործակցելով միմյանց հետ, կարող են հանդես գալ որպես գիտելիքի ստեղծողներ, այլ ոչ միայն սպառողներ: Հոգալով ժառանգության մասին՝ մարդիկ ոչ միայն պարզապես գիտելիք են ստեղծում, այլև հաստատում են իրենց բարոյական ինքնավարությունը:⁷⁶ Եթե ուշադիր լինենք, ապա կտեսնենք, որ շատ պատմություններ դիմադրում են սեղմ, կրճատ տեսքով ներկայանալուն: Ասենք՝ Չարենցը: Բարդ կերպար. ամենայն հավանականությամբ, նա կրակել և վիրավորել էր իր սիրահետումը մերժած մի կնոջ:⁷⁷ Չարենցի կի՞նը: Համաձայն վարկածներից մեկի՝ նրա աքսորը երկարաձգվել էր մասամբ այն պատճառով, որ Սիբիրում նա կրկին ամուսնացել էր:⁷⁸

Կամ Միկոյանը՝ այն մարդը, որն օգնել էր վերադարձնել Չարենցի անունը: Միևնույն ժամանակ նա անմիջական մասնակցություն էր ունեցել 1937 թվականի

⁷³ Վիքիպեդիային վերաբերող հետազոտությունների մասին տես՝ Chitu Okoli և այլք. “The People’s Encyclopedia Under the Gaze of the Sages: A Systematic Review of gg” *SSRN Electronic Journal*, October 24, 2012, <https://doi.org/10.2139/ssrn.2021326>.

⁷⁴ Վիքիպեդիային վերաբերող հետազոտությունների մասին տես՝ Chitu Okoli և այլք. “The People’s Encyclopedia Under the Gaze of the Sages: A Systematic Review of Scholarly Research on Wikipedia,” *SSRN Electronic Journal*, October 24, 2012, <https://doi.org/10.2139/ssrn.2021326>.

⁷⁵ Ի վերջո հիշողության հետ կապված նման աշխատանքը նույնպես կարող է չափելի դառնալ: Արևմտյան համատեքստի վերաբերյալ տես՝ Michela Ferron and Paolo Massa, “Beyond the Encyclopedia: Collective Memories in Wikipedia,” *Memory Studies* 7, no. 1 (January 1, 2014): 22–45, <https://doi.org/10.1177/1750698013490590>.

⁷⁶ Բարոյական ինքնավարության այս հայեցակարգն ավելի մանրամասնորեն մշակված է մեր առաջիկայում լույս տեսնող գրքի *Ius in Memoria* գլխում, որը նաև ցույց է տալիս այդ գաղափարի կարևորությունը տարբեր փիլիսոփայական մոտեցումների համար, ներառյալ՝ Իմանուիլ Կանտի և Ջոն Ստյուարտ Միլի մոտեցումների:

⁷⁷ Տես՝ http://www.fortgreeneffilmworks.com/charents_review_Krikor-Yeghia.pdf: Նկարագրված է նաև Չարենցի թանգարան կատարած այցի ժամանակ: Տես նաև՝ Avetisyan, “The Love Story of Yeghishe and Arpenik Charents.”, և մասնավորապես՝ մեկնաբանությունները:

⁷⁸ Խոսակցություն Չարենցի թանգարան կատարած այցի ժամանակ: Տես նաև Չարենցի դստեր հիշողությունները և Վեր արխիվում հայտնաբերված որոշ, երբեմն անորոշություն բովանդակող հրապարակումները: Лусине Топузьян. "Пять тысяч строк из-под земли", ինչպես նաև՝ Chingiz Huseynov, “Faces of Betrayal,” *Vestnik Kavkaza*, October 16, 2012, <https://en.vestikavkaza.ru/articles/society/32631.html>.

սպանություններին, և երբ 2014 թվականին նրա ընտանիքը ցանկացավ տեղադրել Երևանում նրա արձանը, քաղաքում մեծ աղմուկ բարձրացավ:⁷⁹ Թամանյա՞նը: Ումանք նրա ոճը համարում են «նեոգաղութատիրական ճարտարապետություն», որը եկավ փոխարինելու Երևանի «վերնակուլյար» ճարտարապետությանը: Կասկադի համալի՞րը: Մինչև աստիճանների հայտնվելը բլուրը ծածկված էր խիտ անտառով: Այս փառահեղ աստիճանաշարին նախորդում էր մեկ այլ վերընթաց արահետ, որը վերացավ իր շուրջը աճող բույր ծառերի հետ միասին:

Ումանք չեն ցանկանա ընդունել նման բարդ խնդիրներին անդրադառնալու հրավերը: Սակայն միկրոներդրումները կարող են դառնալ նման կնճռոտ հարցերն ընդգրկելու միջոց: Պատմության շերտերում թաքնված վեհ անցյալի վկայակոչումը գրավիչ հնարավորություն է տալիս դիմելու անառարկելի հաստատումներին, որոնք հաճախ օգտագործվում են վերևից ներքև՝ այլ ձայները մարգինալացնելու համար:

Քաղաքական ինքնությունը և Քաղաքական ոգեկոչման էթիկան

Բոլոր այս կապերը վկայում են, որ հունիսի 14-ի ոգեկոչումը և Կասկադի հուշահամալիրը պիտի դիտարկվեն երկրի քաղաքական ինքնության ավելի լայն համատեքստում: Այն ամենն, ինչ քննարկվեց այստեղ՝ հուշարձանները, ճարտարապետությունը, քաղաքական մրցակցությունը, բանաստեղծի սպանությունը, կրթությունը և այլն, վերաբերում է Հայաստանի թե՛ ներկային՝ ի՛նչ է Հայաստանն այսօր, թե՛ ցանկալի կամ հնարավոր ապագային՝ ի՛նչ է լինելու կամ ինչ է կարող լինել վաղը: Քաղաքացիների համար խաղաղությունները միանգամայն իրական են. բոլոր առանձնահատկություններով հանդերձ՝ անցյալի հետ կապված որոշ մարտահրավերներ նման են մյուս երկրների մարտահրավերներին: Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» գրքի հայտնի առաջին տողը հիշեցնում է, որ ամբողջ աշխարհում կան գնդակահարելու համար նախատեսված հատուկ ջոկատներ, որոնց մասին չպետք է մոռանալ:⁸⁰

Այդ օրը Երևան կատարած այցից այնպիսի տպավորություն ստացա, որ *Քաղաքական ոգեկոչման էթիկան* կարող է օգնել հետազոտել և գուցե նույնիսկ ուղղորդել անցյալում (երբ անկախություն չկար) քաղաքացիական դիրքորոշման խնդիրը և նման խրթին հարցերը: Դա է ցույց տալիս այս գործի արդարությունը. հանուն ժողովրդավարության հիշողությունը գործի դնելու ողջամիտ մտադրությունը. անուններ տալու և անունների վրա սայթաքելու տեղին լինելը: Դա է ընդգծում նաև այս գործի՝ հեղինակություն ձեռք բերելու կարիքը: Այս ամենի հիման վրա ծնվում են գաղափարներ այն մասին, թե ինչպես վերադարձնել ոգեկոչման արարողությունը մոռացությունից, մասնավորապես՝ ավելի շատ կենտրոնանալով առանձին անունների վրա և իմաստավորելով արձանների տեղափոխման կարևոր քայլը: Նման վերադասավորումը կարող է ներգրավել քաղաքացիներին և ապահովել այնպիսի մասնակցություն, որը թույլ կտա այս գործընթացին՝ բարոյական հեղինակություն ձեռք բերել ճիշտ պայմաններում, այն է՝ միմյանց հետ քննարկումների ընթացքում:

Կասկադի հուշահամալիրի հետ կապված իրավիճակը հաստատում է այլ

⁷⁹ Gayane A. Shagoyan, “Between Memory and Memorial: Anastas Mikoyan and ‘Social Lustration’ in Armenia.” and Yekaterina Poghosyan, “Stalin’s Man Mikoyan to Get Statue in Yerevan,” *IWPR, Institute for War and Peace Reporting*, May 29, 2014, <https://iwpr.net/global-voices/stalins-man-mikoyan-get-statue-yerevan>.

⁸⁰ «Կանգնեն շատ տարիներ, և գնդապետ Աուրելիանո Բուենոսիան՝ գնդակահարող ջոկատի դիմաց կանգնած, կմտաբերի հեռավոր այն իրիկունը, երբ հայրն իրեն սառույց տեսնելու տարավ»:

համատեքստերից բխող եզրահանգումը, որ *Քաղաքական ոգեկոչման էթիկան* կարող է ուղղակիորեն կիրառվել: Որպես օրինակ կարելի է բերել Վրաստանի Ստալինի և Բոլնիսիի թանգարանները կամ Տիտոյի թանգարանը Խորվաթիայի Բրիյունիում: Առաջիկայում սպասվում են նաև այլ ուսումնասիրություններ:⁸¹

Հեռու՝, մոտիկ ընկերներին

Կասկաղի սանդուղքի վերին հատվածում ձեզ անակնկալ է սպասում. այստեղ մի զգալի կտոր մնում է անավարտ: Երբ նայում ես ներքևից, այդ ահռելի փոսը չի երևում,⁸² սակայն հասնելով վերև՝ տեսնում ես սաղմնային վիճակում գտնվող հիմքերը և բետոնից դուրս ցցված ամրանները:

Ամենավերին հարթակին կարելի է հասնել միայն մեծ շրջանցում կատարելով: Հունիսյան օրվա վերջին, Կասկաղի սրճարաններից մեկում ընթրելուց հետո, ընկերուհիս, որն ապրում է Կասկաղի վերին հատվածում՝ Հաղթանակի զբոսայգու մոտ, ասաց, որ պատրաստվում է տաքսիով տուն գնալ: «Պարզապես այդ կտորը վտանգավոր է ոտքով անցնելու համար», - մեկնաբանեց նա:

Դրսից նայողին թերևս թվում է, որ այդ «փոսը» կա նաև այն հարցում, թե ինչպես են հայերը հիշում իրենց անցյալը: Միգուցե այս իմաստով նույնպես ժամանակն է, հենվելով արդեն իսկ գոյություն ունեցող հիմքերի վրա, ուղիղ կապ հաստատել անցյալի հետ և ճանապարհ հարթել դեպի ավելի կենսունակ ապագա, որում հայերը կկարդան Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը և կվայելեն այն որպես բարձր գրականություն, այլ ոչ թե որպես կրկնվող սցենար այն մասին, թե ինչպես է պատմությունը ավելի քան հարյուր տարվա մենության ընթացքում կյանքեր կուլ տվել և կյանքեր մարել:

Հեռու՝, մոտիկ ընկերներին, – աշխարհներին, արևներին, —

Հրանման հոգիներին: —

Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ, —

Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ, —

Կյանքի՛, մահի՛ այս ամեհի աղջամուղջում՝

Ողջակիզվող հոգիներին – ողջու՛յն, ողջու՛յն: —

Հիրավի՛ ողջու՛յն քեզ, Կոնստանտին, և ողջու՛յն քեզ, Սողոմոն:

Անզլերենից թարգմանեց Նունե Դիլանյանը

⁸¹ Stu՝ Gutbrod, “The Ethics of Political Commemoration: The Stalin Museum and Thorny Legacies in the Post-Soviet Space – PONARS Eurasia”; Hans Gutbrod, “Bolnisi Museum — the Longest Human Journey,” *OC Media*, August 1, 2022, <https://oc-media.org/features/bolnisi-museum-the-longest-human-journey/>; Gutbrod, “Brijuni or Brioni.”, և 2023-ին սպասվող աշխատությունը:

⁸² Stu՝ <https://www.yerevan.am/en/news/anavart-kaskad-hamaliri-shinararowt-yowonn-avartelow-hamar-hamaynk-e-banakts-owm-e-gafeschean-t-angar/>